Azg Ազգ

19 ՅՈՒՆԻՍ 2012 ԵՐԵՔՇԱԲԹԻ 110(4962)

ISSN: 1829-1651

Սերժ Սարգսյանը 7 տկոս տնտեսական աճի ապահովման պահանջ դրեց

Կառավարությունը ներկայացրեց իր ծրագիրը

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Նորանշանակ կառավարության երեկ տեղի ունեցած նիստը նախագահում էր երկրի նախագահ **Սերժ Սարգսյանը**: Բացելով նիստը՝ նա նշեց, որ նոր կառավարությունում շարունակում է աշխատել նախկին նախարարների մեծ մասը: Այնուհետեւ նախագահը ձայնը տվեց վարչապետ **Տիգրան Սարգսյանին**՝ ներկայացնելու կառավարության ծրագիրը, որը պետք է սահմանված ժամկետում ներկայացվի Ազգային ժողովին:

Վարչապետը նշեց, որ կառավարության ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության, Հանրապետության նախագահի, Հանրապետական կուսակցության եւ «Օրինաց երկիր» կուսակցության նախընտրական ծրագրերի հիմնական դրույթները, ինչպես նաեւ խորհրդարանական կուսակցությունների ծրագրերում ներկայացված՝ նշված փաստաթղթերի հետ համադրելի գաղափարները: «Ծրագրի հիմքում ընկած է այն գաղափարը, որ պետությունը պարտավոր է մարդու համար ստեղծել արժանապատիվ աշխատելու եւ արտելու լավագույն հնարավորությունները», ասաց Տիգրան Սարգսյանը:

Տես էջ 3

Ռուսական երկու ռազմանավ պատրաստ է շարժվել դեպի Սիրիա

«Նիկոլայ Ֆիլչենկով» եւ «Տեզար Կունիկով» դեսանտային մեծ ռազմանավերից բաղկացած նավախումբը պատրաստվում է Միջերկրական ծով դուրս գալ հատուկ առաջադրանքներ կատարելու Սիրիայի Տարտուս նավահանգստում, որտեղ գտնվում է ռուսական ծովուժի նյութատեխնիկական ապահովման կետը: Այդ մասին երեկ Ինտերֆաքս գործակալությանը հայտնել է ՌԴ ՊՆ աղբյուրներից մեկը:

«Ռազմանավերին կուղեկցի C-15 փրկարարական քարշանավը: Ծովային հետեւակը անհրաժեշտության դեպքում կապահովի ՌԴ քաղաքացիների անվտանգությունը եւ կտարհանի նյութատեխնիկական ապահովման կետի գույքի մի մասը», ավելացրել է աղբյուրը:

Ի դեպ, օրերս Սիրիայում գնդակոծվել էին ռուսաստանցի մասնագետների ավտոբուսը եւ բնակելի շենքը:

«Տեզար Կունիկովը» Սիցիլիայից նոր էր վերադարձել Սեւաստոպոլ: Պաշարների համալրումից հետո նավը կմեկնի Սիրիա՝ նոր առաջադրանք կատարելու: Ինտերֆաքսի տվյալներով, դեսանտային երկու նավերում Սեւծովյան նավատորմի հետեւակայիններ են: «Նավախմբի Միջերկրական ծով դուրս գալու օրը կախված կլինի Սիրիայի իրադրության զարգացումից», ընդգծել է ՌԴ ՊՆ աղբյուրը:

Ռազմական գերատեսչությունում ավելի վաղ հայտարարել էին, որ այս անգամ նավերը Սիրիայի ափերի մոտ կուղարկվեն ոչ թե ուժի ցուցադրման, այլ ռուսաստանցիների տարհանման համար: Ամեն դեպքում ՌԴ օդուժը պատրաստ կլինի օդից աջակցել ծովուժին: Այդ մասին հայտարարել է ՌԴ օդուժի գլխավոր հրամանատար, գեներալ-մայոր Վլադիմիր Գրադուսովը:

Պ. Ք.

Ադրբեջանի օգտին լրտեսած խումբը դիմել է Վերաքննիչ դատարան

Նրանք պահանջում են ազատություն եւ հայտարարում, որ պետական դավաճանությամբ չեն զբաղվել

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ադրբեջանի օգտին լրտեսած, պետական դավաճանության մեջ մեղադրվող եւ նրանց հանցանքի մասին տեղեկացված ու իրավապահ մարմիններին չհայտնած եւս երեք անձանց դատավարությանը «Ազգ» օրաթերթն անդրադարձել է բազմիցս: Առաջին ատյանում դատավարությունն ավարտվել է, Կենտրոն եւ Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության դատարանի նախագահող դատավոր Մնացական Մարտիրոսյանն էլ նրանց դատապարտել է ազատազրկման:

Կարեն Մեհրաբյանը, Աշոտ Չթրկյանն ու Ռոմիկ Մաթեւոսյանը մեղադրվում են պետական դավաճանության հատկանիշներով հանցանք գործելու համար, մյուս երեքը՝ Կարեն Պետրոսյանը, Արթուր եւ Դավիթ Ավետիսյանները՝ հանցագործության մասին իմանալու եւ իրավապահ մարմիններին չհայտնելու հատկանիշներով: Համաձայն մեղադրական եզրակացության, լրտեսական ցանցի պարագլուխը Կարեն Մեհրաբյանն է:

Տես էջ 3

Փարիզյան «տեղապտույտներ»

Կամ ադրբեջանցիները անում են ճիշտ հակառակը, ինչը մինչ այդ ստորագրել են

Փարիզում երեկվա հանդիպումը, որի ընթացքում նոր մոտեցում ներկայացնելու մասին Հարավային Կովկաս այցելության ընթացքում հայտարարեց ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը, այդպես էլ կարծես առանց նորությունների է անցել, կամ էլ, ինչպես դարաբաղյան բանակցությունների գրեթե ողջ ընթացքը, չի ներկայացվում հանրությանը: Ամեն դեպքում, հանդիպման մասին ԵԱՀԿ պաշտոնական հաղորդագրությունը ոչինչ չի ասում ոչ «նոր մոտեցման», ոչ էլ որեւէ ձեռքբերման կամ հանգրվանի մասին, այլ, սովորական դարձած տարբերակով, կրկնում է նմանօրինակ նախորդ հայտարարությունները:

Ըստ այդմ, հայտարարության մեջ ասվում է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ռոբերտ Բրադտկեն, Իգոր Պոպովն ու Ժակ Ֆորը Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարներ Էդվարդ Նալբանդյանի ու Էլմար Մամեդյարովի հետ քննարկել են դարաբաղյան հակամարտության կարգավորման հետագա ընթացքը, ինչպես նաեւ «մարդասիրական փոփոխությունների զարգացման ու հրադադարի խախտման միջադեպերի հետաքննության մեխանիզմի ստեղծման, պատմական ու մշակութային արժեք ներկայացնող վայրերի պահպանության ուղղությամբ հետագա աշխատանքը»:

Հիրավի հրաշալի միտք է, ցանկություն, որ մի հայտարարությունից մյուսը կարծես արտագրում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների անունից հայտարարություն տարածողները, սակայն արդյունքում ոչ մի քայլ չի ապացուցում այդ մտադրությունների լրջությունը: Իսկ որ համանախագահները կրկնել են նաեւ «խորին մտահոգությունը վերջին միջադեպերի առնչությամբ՝ շեշտելով 1994-ի հրադադարի պայմանագիրը հարգելու անհրաժեշտությունը», անլուրջ է դարձնում նմանօրինակ հայտարարությունը, քանի որ ամեն անգամ նման խոսքեր ասվում ու հրապարակվում են, սակայն դրանից դենը ոչ մի բան չի ձեռնարկվում:

Հայտարարության մեջ նաեւ ընդգծվում է, թե Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարները պատրաստ են շարունակել աշխատել համանախագահների հետ «խաղաղ կարգավորման հասնելու» նպատակով, ինչպես նաեւ պատրաստակամ են ձեռնարկելու փոխվստահությանն ուղղված քայլեր, որոնք «կբարելավեն բանակցությունների մթնոլորտը»: «Հանդիպումն անցել է դրական, կառուցողական մթնոլորտում: Որպես հաջորդ քայլ՝ համանախագահները մոտակա մի քանի շաբաթվա ընթացքում կայցելեն տարածաշրջան», նշված է հայտարարությամբ:

Ադրբեջանի վերջին շրջանում արած հայտարարությունների ու քայլերի ֆոնին ակնհայտ է մեկ բան. ճիշտ այնպես, ինչպես նախագահների մակարդակով հանդիպումներից հետո հայտարարությունների տեքստը ստորագրում ու հետո հրաժարվում է Ադրբեջանի նախագահ Ալիեւը, նույն կերպ է վարվում այդ երկրի արտգործնախարարը, որը վերջերս փաստացի հայտարարեց ստատուս քվոն ամեն կերպ փոփոխելու իրենց մտադրության ու ցանկության մասին՝ նաեւ սադրանքներով ու շանտաժով, իսկ երեկ փաստացի հայտարարել է մեկ այլ բան, թե պատրաստ է շարունակել աշխատանքը համանախագահների հետ:

Սրանից հետո Մամեդյարովը գուցե չանի հայտարարություններ, որոնք հետո հակասեն այսօրինակ հայտարարություններին՝ նաեւ համանախագահների ստորագրությամբ, սակայն Ադրբեջանում պաշտոնական տեսակետը տեղ հասցնելու համար կան այլ խոսափողներ, որոնք էլ, ի դեպ, ի տարբերություն վերջերս շատ չխոսկան դարձած Մամեդյարովի, հաճախ աշխարհին փորձում են «հուշել», թե ինչ է ցանկանում Ադրբեջանը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գագիկ Ծառուկյանը անելու է օրինավոր բոլոր քայլերը

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանի մամուլի խոսնակ Իվետա Տոնոյանը երեկ մեր թերթին է ուղարկել հետեւյալ հաղորդագրությունը Վարդան Օսկանյանի խնդրով.

Գագիկ Ծառուկյանը վերջին օրերին գտնվում էր արտերկրում: Հայաստան վերադառնալուց անմիջապես հետո նա հանդիպել է Վարդան Օսկանյանի հետ:

Վերջինս Գագիկ Ծառուկյանին ներկայացրել է «Սիվիլիթաս» հիմնադրամի շուրջ ստեղծված իրավիճակը: ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանը շեշտել է, որ ինքը, ինչպես նախկինում, այսուհետ եւս անելու է օրենքով սահմանված բոլոր քայլերը իր կուսակից ընկերների իրավունքների եւ շահերի պաշտպանության համար:

ԲՀԿ ղեկավարը Հայաստանում ժողովրդավարական արժեքների եւ բազմակարծության հաստատման գործում բարձր է գնահատում «Սիվիլիթաս» հիմնադրամի գործունեությունը:

Գագիկ Ծառուկյանը պատրաստակամություն է հայտնել նաեւ, անհրաժեշտության դեպքում Հայաստան հրավիրել միջազգային հեղինակություն ունեցող իրավաբանների եւ փաստաբանների խումբ:

Շիման գծում հայ զինվոր է մահացել

Երեկ երեկոյան ժամը 6-ի սահմաններում, կայքերում լուրեր տարածվելուց հետո, ԼՂՀ ՊԲ-ն հաստատեց, որ առավոտյան ժամը 08:25-ի սահմանում ՊԲ արեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքում հակառակորդի գնդակից մահացու վերք է ստացել ժամկետային զինծառայող, 1993 թ. ծնված Արամ Սիմոնի Գյուլնազարյանը: Վիրավորը հոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին մահացել է:

Նշենք, որ երեկ Փարիզում հանդիպել են Ադրբեջանի եւ Հայաստանի արտաքին գործերի նախարարներ Էլմար Մամեդյարովն ու Էդվարդ Նալբանդյանը՝ քննարկելու Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցը: Սա առաջին դեպքը չէ, երբ երկու երկրների նախագահների կամ արտաքին գործերի նախարարների հանդիպման ժամանակ հակառակորդը խախտում է հրադադարն ու կրակում հայկական հենակետերի ուղղությամբ:

Նման դեպք պատահեց նաեւ 2 տարի առաջ՝ հունիսի 17-ին Սանկտ Պետերբուրգում կայացած Սարգսյան-Մեդվեդեւ-Ալիեւ եռակողմ հանդիպումից հետո. նախագահ Ալիեւն անսպասելիորեն մեկնեց Բաքու, ինչին հաջորդեց ադրբեջանական դիվերսիան: Հունիսի 18-ին ադրբեջանական զորքերը դիվերսիոն հարձակում էին իրականացրել Չայլուի ուղղությամբ, ինչի հետեւանքով հայկական կողմը կորցրել էր 4 զինվոր, եւս 4-ը՝ վիրավորվել էին:

Այս տարվա հունիսի սկզբին, երբ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը այցելեց Հայաստան, ադրբեջանական կողմը կրկին միջազգային հանրությանը ներկայացավ ագրեսորի կերպարով: Այս անգամ ադրբեջանական դիվերսիայից հայկական կողմը 4 զոհ տվեց:

Ստացվում է Ադրբեջանի ականջը քաշող չկա, որ ամեն անգամ միջազգային մակարդակով առաջին դեմքերի հանդիպումներից կամ այցելություններից հետո Ալիեւի ղեկավարությունը դիմում է զենքի օգնությանն ու շարունակում ագրեսորի եւ հրահրողի իր գործը: Մնում է, որ մենք քաշենք նրա ականջը:

Հ. Հ.

ՀՀԿ-ԲՀԿ մրցակցությունը՝ իրական

Վերջին շրջանի սահմանային միջադեպերը պատահական, իրավիճակային չեն, այլ հաշվարկված գործողություններ են՝ որոշակի խնդիրներ լուծելու համար: Այսպիսին է խաղաթղթե **Ալեքսանդր Իսկանդարյանի** գնահատականը հունիսի 4-ից ցայսօր շարունակվող միջադեպերի առնչությամբ, ընդ որում, բացատրությամբ, որ այդ ճանապարհը Ադրբեջանի կողմից շանտաժ անելու երկու հնարավորություններից մեկն է: Մյուսն էլ, ըստ խաղաթղթի, ռազմատենչ հռետորաբանությունն է, որը, սակայն, Ադրբեջանի համար ցանկալի արդյունք չի ապահովում:

Իսկանդարյանի ներկայացմամբ՝ սադրանքների գնալու դեպքում Ադրբեջանի համար ռիսկը փաստացի փոքր է, ռեսուրսներ առանձնակի չեն ծախսվում, իսկ այդպիսի քայլերի անհրաժեշտություն հարեւան երկրում տեսնում են՝ փորձելով աշխարհին ցույց տալ, թե սաստուս քվոն այլեւս չպետք է պահպանվի: Մինչդեռ պատերազմ վերսկսելու պարագայում նույն այդ ռիսկերը Ադրբեջանի համար շատ ավելի մեծ են, ռեսուրսներ չկան, չկա նաեւ դրա ռացիոնալ անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հայտարարությանը, թե Փարիզում երեկ տեղի ունեցած ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ու Հայաստան-Ադրբեջան արտգործնախարարների հանդիպմանը (որից քաղաքացիները սպասումներ չունի) նոր մոտեցում էր ներկայացվելու, «Նոյյան տապան» ակումբում հյուրընկալված Իսկանդարյանը հայտարարեց, թե Քլինթոնը չէր կարող ասել, թե կգնանք Փարիզ ու այնտեղ ոչինչ չի լինի:

Քաղաքագետն ասուլիսում անդրադարձավ նաեւ հայաստանյան իրողությունների, մասնավորապես նոր կառավարության ձեւավորմանն ու ՀՀԿ-ԲՀԿ հարաբերություններին: Ըստ այդմ, նոր կառավարության առումով անսպասելի լուրջ բան տեղի չի ունեցել, թեեւ հետաքրքրական ֆենոմեն է մնում ՀՀԿ-ԲՀԿ մրցակցությունը, որի վկայություններից մեկն էլ «Սիվիլիթաս» հիմնադրամի ու նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանի առնչությամբ ստեղծված վիճակն է:

Թե արդյոք կնշդ է ՀՀԿ-ԲՀԿ մրցակցությունը՝ Իսկանդարյանը հակադարձեց, թե ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանն ունի իր շահերը, որոնք չեն համընկնում մյուս խաղացողների շահերի հետ, նաեւ ունի սեփական քաղաքական նպատակները, ուստի մրցակցությունը իրական է: Միեւնույն ժամանակ, Իսկանդարյանի դիտարկմամբ, ԲՀԿ-ում տարբեր մարդիկ կան, որոնցից ոմանք այդ կուսակցություն են մտել «ոչ փողոցում կանգնելու» համար, այլ «իշխանության սեգմենտ ստանալու», ինչը տեղի չունեցավ: Ընդդիմադիրի կեցվածքն էլ ԲՀԿ-ին այնքան էլ չի համապատասխանում:

Ինչեւէ, քաղաքագետը կարծում է, որ մտնում ենք «մեռած սեզոն», ու գործընթացները կակտիվանան արդեն սեպտեմբեր-հոկտեմբերին՝ նախագահական ընտրությունների համատեքստում:

Ա. Հ.

Մանկավարժականի շրջանավարտները դիպլոմներ ստացան վարչապետից

ՀՀ վարչապետ եւ ՀՊՄՀ խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանն «Արամ Խաչատրյան» ֆիլհարմոնիկ մեծ համերգասրահում Հայկական պետական մանկավարժական համալսարանի կազմակերպած տոնական միջոցառման ժամանակ ավարտական դիպլոմներ հանձնեց այս տարվա շրջանավարտներից լավագույններին:

Տոնական միջոցառմանը ներկա էին ՀՊՄՀ կառավարման խորհրդի անդամները՝ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ **Նավասարդ եպս. Կճոյանը**, ՀՀ կրթության եւ գիտության նախարար **Արմեն Ազոյանը**, բուհի պրոֆեսորադասախոսական կազմն ու բարձրաստիճան այլ հյուրեր:

Արարողությունը սկսվեց Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ:

Նա, շնորհավորելով շրջանավարտներին, ասաց. «Դուք այսօր դառնում եք դնում նոր կյանք. թող միջավայրը չազդի ձեզ վրա, այլ դուք՝ որպես աբովյանականներ, ձեր կնիքը թողեք կյանքի վրա: Թիավարեք հոսանքին հակառակ. դա է բնորոշ անհատի գործողությունը»,- խորհուրդ տվեց հոգեւոր առաջնորդը:

Ապա համալսարանի խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը կարմիր դիպլոմներ հանձնեց 11 ֆակուլտետների 22 լավագույն ուսանողներին:

Պաշտոնական մասին հաջորդեց տոնական համերգը. հայ էստրադայի ներկայացուցիչներ Միհրը, Դավիթ Ամալյանը, Արսեն Գրիգորյանը (Մրո), Սոֆի Մխեյանը, Վարդան Բաղալյանը, Նարեկ Բավեյանն ու Էրիկը շնորհավորեցին շրջանավարտներին եւ իրենց աշխույժ կատարումներով տոնական շունչ հաղորդեցին երեկոյին:

Մեկ օրում բուհի բոլոր շրջանավարտներին դիպլոմ հանձնելու ավանդույթը համալսարանում հիմք է դրվել նախորդ տարվանից: Մանկավարժական համալսարանն այս տարի ունեցավ 2003 շրջանավարտ:

«Երգող այբուբենը»՝ ազգանվեր գործ

Խոսել կամ գրել գրքի մասին, հարգալից ու պատասխանատու գործ է: Ըստ իս յուրաքանչյուր լավ գիրք բխում է հեղինակի հոգու ու արյան եռից: Քառասուն տարվա մանկավարժիս պատասխանատվությամբ են տրվում այս զգուշավոր տողերը, որ ուզում եմ ուրանց նվիրաբերել վերջերս լույս տեսած «Երգող այբուբեն» զարմանահրաշ մանկական ձեռնարկին: Բազմաթիվ մանկական դասագրքերի հեղինակ, հրաշալի գրող ու մտավորական, «9-րդ հրաշալիք» ամսագրի գլխավոր խմբագիր Վաչագան Ա. Սարգսյան: Ինչքան էլ ուզենաս չափի մեջ զուսպ գովասանքի բառեր նվիրաբերել բանաստեղծի լայնեզր ու գունազարդ «Երգող այբուբենին»,- հնարավոր չէ չբացել սիրտդ ու մեծն Վիլյամ Սարոյանի նման հայ ազգիդ ականջին «չպոռալ», որ իրոք ծնունդ է առել մանկական լեզվակերպին, հոգուն ու ուրտին այնքան համահունչ «Երգող այբուբենը»: Հեղինակը այնպիսի ջերմությամբ է շունչ ու ոգի տվել մեր նորոյան սուրբ այբուբենի յուրաքանչյուր տառ ու հնչյունի, ուր նրանք ասես ժպիտներն երգում ու պարում են: Եվ ամեն մի ընթերցողի իր հետ կտանի իր մանկության ոսկե հեքիաթների գիրկը:

Հատկանշական է «Երգող այբուբենի» նկարազարդումների բարձրաճաշակ մարմնավորումը, ուր առավել բնորոշ է արտահայտվում ուսուցողական ու հատկապես հայրենասիրական ոգին (նկարիչ՝ Խորեն Հակոբյան): «Երգող այբուբենը» որպես ուսանելի մի ձեռնարկ լավ նվեր է մեր մանուկներին: Հատկապես գովելի է «Ձ» տառի մասին գրված երգը, որ տեսահոլովակով վերարտադրված, գրքի կողին կից՝ հրամցվում է ընթերցողին:

Թերեւս ամբողջ գիրքը համեմված է մաքրազուլալ ոտանավորներով, որոնք, համոզված եմ, իրենց արժանի տեղը կունենան հայկական դասագրքերի էջերում: Ուրանց շնորհավորում ենք հեղինակին՝ բանաստեղծ Վաչագան Ա. Սարգսյանին: Դարձյալ սպասենք «մանուկների բարի ծառայից» առավել հրաշալի ստեղծագործություններ:

ԱԼԵՔՍԱՆ ԳՈՄՑՅԱՆ

ՔՆՆԱԿԱՆ ՀԱՅԱՑՔ ԱՅԵՐԻ ՄԱՍՈՒԻՆ

Ինչպես էր Ադրբեջանը գաղութացնում Լեռնային Ղարաբաղը

Day.az կիսապաշտոնական ինտերնետ-ռեսուրսը «Պատմական դիտանկյուն» խորագրի տակ ամիսներ ի վեր անդրադառնում է Լեռնային Ղարաբաղի «պատմական անցյալին»: Վերջին հրապարակումը նվիրված է 1987 թ. դրությամբ ինքնավար մարզի սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական եւ հոգեւոր-մշակութային իրավիճակին: Հեղինակը, որ անանուն է, փորձել է «ապացուցել, որ ԼՂԻՄ-ը միջին հանրապետականից բարձր սոցիալ-տնտեսական մակարդակ ուներ»:

Սկսենք ժողովրդագրական ցուցանիշներից: Ըստ հրապարակման, 1987-88-ին ԼՂԻՄ-ի բնակչության թիվը «շուրջ 180 000 էր, որի ոչ ավելի, քան մեկ քառորդը ադրբեջանցիներ էին, եւ այսպիսով՝ ինքնավարության կազմավորումից մինչ այդ պահը նրա բնակչությունն աճել էր 1,5 անգամ»: Նախ, եթե Լեռնային Ղարաբաղում ամեն ինչ օրինաչափ լիներ, ապա նույն ժամանակահատվածում ադրբեջանական բնակչությունը չէր աճի շուրջ 4,5, իսկ ընդհանուրը՝ 1,5 անգամ: Երկրորդ, 1923 թ. Ադր. ԽՍՀ ամբողջ բնակչությունը շուրջ 2 միլիոն էր, 1988-ին՝ 7:

Այսինքն, խորհրդային տարիներին Ադր. ԽՍՀ ամբողջ բնակչությունն աճել է 3,5 անգամ, ինչը ԼՂԻՄ ցուցանիշը կրկնակի գերազանցում է: Ընդ որում, վիճակագրական տվյալներով, ԼՂԻՄ բնակչությունը նախապատերազմական՝ 1939 թ. մակարդակին հասել է միայն 1979-ին: Ժողովրդագրական նման աղետի ենթարկվել են միայն ֆաշիստական օկուպացիայի ենթարկված շրջանները: Իսկ դա իր հերթին պայմանավորված է նրանով, որ ԼՂԻՄ-ում զորահավաքի է ենթարկվել բնակչության գրեթե մեկ երրորդը: Դա այն դեպքում, երբ ամբողջ Ադր. ԽՍՀ-ում այդ ցուցանիշը չի գերազանցել 20 տոկոսը: ԼՂԻՄ-ից զորակոչվել են նույնիսկ 1895 թ. ծնված տղամարդիկ: Դա կազմակերպված էթնոցիդ էր, որի հետեւանքով ԼՂԻՄ արական բնակչության կեսից ավելին ենթարկվել է զորահավաքի:

Էթնոցիդի երկրորդ ալիքը սկսվել է 1946-ից: Այդ ալիքի տակ են ընկել ԼՂԻՄ հայկական բնակավայրերի դպրոցահասակ տղաները եւ աղջիկները, որոնց բռնությամբ հավաքագրել եւ ուղարկել են Մինգեչաուր, Սումգայիթ՝ իբրեւ ձրի աշխատուժ, քանի որ պաշտոնապես նրանք համարվել են ֆաբրիկագործարանային ուսուցման մեջ գտնվողներ, օգտագործվելով «կոմունիստական շինարարության» կառույցներում: Հավաքագրված աղջիկների մեծ մասը ենթարկվել է հոգեբանական եւ սեքսուալ բռնությունների: Երբ Ադրբեջանում խոսում են «խառն ամուսնությունների» մասին, ապա նկատի են ունենում հենց այդ տարիներին Բաքվում, Սումգայիթում, Մինգեչաուրում եւ այլուր հայտնված՝ կատարելապես անպաշտպան հայ աղջիկներին, ովքեր հարկադրաբար «իրենց կյանքը կապել են» ադրբեջանցու հետ:

Անդրադառնալով ԼՂԻՄ արդյունաբերությանը, Day.az- ի հեղինակը գրում է, որ ԼՂԻՄ տնտեսության մեջ վերջինս կազմում էր ընդհանուրի 60 տոկոսը: Արդյունաբերության մեջ զբաղված էր մարզի 94, 4 հազար աշխատունակ բնակչությունից 10 հազարը, ցուցանիշ, որով «ԼՂԻՄ-ը զիջում էր միայն Բաքվին եւ Սումգայիթին»: Նա, ընդսմին, ասում է, որ արդյունաբերության մեջ հիմնական տեղ զբաղեցնում էր մեքսաքագործությունը: Ո՞րն է այստեղ խարդախությունը:

Բանն այն է, որ արդյունաբերության այդ ճյուղը որեւէ կերպ չի կարելի համարել Ադր. ԽՍՀ «նվիրատվություն»: Լեռնային Ղարաբաղում նախախորհրդային ժամանակներում գործել են մեքսաքագործական տասնյակ մասնավոր գործարաններ: Խորհրդային իշխանության հաստատումից հետո դրանք «ազգայնացվել» եւ կենտրոնացվել են Ստեփանակերտում: Այդ կենտրոնացումը ծանր է անդրադարձել մի շարք գյուղական բնակավայրերի վրա, որտեղ նախկինում մեքսաքագործարաններ էին աշխատում: Այնպես որ, ադրբեջանական իշխանությունների «ներդումն» այն է, որ մեքսաքագործությունը կենտրոնացնելով՝ աշխատատեղեր են ստեղծվել Ստեփանակերտին մերձակա ադրբեջանաբնակ գյուղերի համար:

ԼՂԻՄ գյուղատնտեսության մասին խոսելիս Day.az-ը խոստովանում է, որ մարզը տալիս էր Ադր. ԽՍՀ գյուղատնտեսական ընդհանուր արտադրանքի 5 տոկոսը: Դա այն դեպքում, երբ նրա բնակչությունը կազմում էր «հանրապետության բնակչության ոչ ավելի, քան 2 տոկոսը»: Ի՞նչն է այստեղ ուշագրավ: Այն, որ Ադր. ԽՍՀ, ինչպես եւ ողջ խորհրդային տնտեսությունը ոչ թե ազատ-շուկայական էր, այլ՝ պլանային: Այսինքն, տնտեսությունները պարտադրված էին կատարել այն պլանները, որ իջեցվում էին վերեւից: Իսկ վերեւում Ադր. ԽՍՀ կառավարությունն էր, որն էլ հանրապետության ողջ բնակչության ոչ ավելի, քան 2 տոկոսին պետական պլանով պարտադրում էր ապահովել Ադր. ԽՍՀ գյուղատնտեսական ողջ արտադրանքի 5 տոկոսը:

Տես էջ 4

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահություն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Անհասկանալի պաշտոնանկություն եւ տարօրինակ նշանակում

Մանուկ Վարդանյանի փոխարեն Գագիկ Բեգլարյան

Հայաստանի կառավարության նոր կազմը, հակառակ զանազան «հավաստի աղբյուրների», հաստատվեց առանց մեծ փոփոխությունների, ինչը տրամաբանական էր: Բանն այն է, որ մի քանի ամիս հետո տեղի են ունենալու նախագահական ընտրությունները, որից հետո նոր ընտրված նախագահը պետք է նշանակի նոր վարչապետ եւ կառավարության կազմ: Այսինքն, անիմաստ էր 6-7 ամիսների համար մեծ փոփոխություններ կատարել կառավարության կազմում:

Նոր կառավարությունում կատարված մի քանի փոփոխություններն էլ հիմնականում պայմանավորված էին ԲՀԿ-ի կոալիցիայից դուրս գալով եւ հետեւաբար նրա ներկայացուցիչ նախարարների՝ կառավարության կազմից դուրս գալով: Նրանց փոխարինեցին ՀՀԿ-ի, ՕԵԿ-ի նախարարները եւ մեկ անկուսակցական: Սա եւս լիարժեքորեն տեղավորվում է առողջ տրամաբանության շրջանակներում: Սակայն երկրի նախագահի նշանակումներից մեկը առնվազն տարօրինակ տպավորություն է թողնում: Խոսքը տրանսպորտի եւ կապի նախարարի պաշտոնում Մանուկ Վարդանյանի փոխարեն Երեւանի նախկին քաղաքապետ Գագիկ Բեգլարյանի նշանակման մասին է:

Նախ, ինքնին անհասկանալի էր Մանուկ Վարդանյանի պաշտոնանկությունը: Նա նախարար էր նշանակվել «Օրինաց երկրի» քվոտայով, որը շարունակում էր մնալ Հանրապետական կուսակցության կոալիցիոն գործընկերը: Երկրորդ, նրա՝ որպես նախարարի գործունեությունը, թեկուզ կարճաստեւ՝ մոտ երկու տարվա, բավականին արդյունավետ էր: Անդրադառնանք կոնկրետ փաստերին: Ճանապարհաշինության ոլորտում, բացի նախորդ տարիների համեմատ ավելի շատ ճանապարհների կառուցումից՝ լինի միջպետական, հանրապետական, թե միջհամայնքային նշանակության, տարանջատում մտցվեց դրանք նախագծողի եւ փորձաքննություն իրականացնողի, նախագծողի եւ տեխնիկական վերհսկողություն իրականացնողի, տեխնիկական վերահսկողություն իրականացնողի եւ շինարարություն իրականացնողի միջեւ, երկարացվեց ճանապարհների կառուցմանը հաջորդող հետերաբխիային սպասարկման ժամկետը՝ 1 տարվա փոխարեն դառնալով 2 տարի, ճանապարհների կառուցման ժամանակ խնայվեցին միջոցներ, որոնք ուղղվեցին այլ ճանապարհահատվածների կառուցմանը: Մինչ այդ ոչ մի նախարար չէր էլ մտածում միջոցներ խնայել կամ ճանապարհների հետերաբխիային սպասարկման ժամկետ երկարացնել: Այնուհետեւ, Մանուկ Վարդանյանի պաշտոնավարման ժամանակ սկսվեց իրագործվել խոշոր՝ հյուսիս-հարավ մայրուղու նախագիծը երեք հատվածներում՝ Երեւան-Աշտարակ, Երեւան-Արարատ, Աշտարակ-Թալին, մեկնարկեց Վանաձոր-Ֆիոլետովո երկաթուղու տեխնիկատնտեսական հիմնավորումը, կառուցման նախագիծը եւ շուտով կսկսվի դրա շինարարությունը, պատրաստվեց «Հայավտոկայարան» ընկերության վարձակալության կամ կոնցեսիոն կառավարման հանձնելու փաթեթը, հայտարարվեցին մինչեւ 2015-ի հունվարի 1-ը թվային հեռուստահեռարձակման համակարգի ներդրման մրցույթները: Եվ ի վերջո, «Զվարթնոց» օդանավակայանի տրանսպորտային հանգույցի շինարարությունը կառուցելու պայմանագիրը ստորագրվեց, որը պետք է իրականացվի «Արմենիա միջազգային օդանավակայաններ»-ի» եւ «Հարավկովկասյան երկաթուղու» ֆինասավորմամբ:

Հակառակ տրանսպորտի եւ կապի նախկին նախարար Մանուկ Վարդանյանի հաջող գործունեությանը փաստող ապացույցների ինչպես այս ոլորտում, այնպես էլ նախկինում, երբ նա անշարժ գույքի կադաստրի կոմիտեի հիմնադիր ղեկավարն էր, նորանշանակ նախարար Գագիկ Բեգլարյանը իր նախկին՝ Երեւանի քաղաքապետի պաշտոնում աչքի չէր ընկել հաջող գործունեությամբ: Գուցե դա պայմանավորված էր նրանով, որ նա շատ կա՞ր պաշտոնավարեց: Գուցե: Սակայն ինչո՞ւ կարճ պաշտոնավարեց: Ինչպես այն ժամանակ ասում էր երկրի նախագահ Սերժ Սարգսյանը Գագիկ Բեգլարյանի պահվածքի վերաբերյալ, իր համար անընդունելի է, երբ ինչ-որ մեկը փորձում է բռունցքներով հարցեր լուծել: Չասենք, որ ով չէր ալարում, այդ օրերին գովում էր նախագահի մոտեցումը եւ քննադատում Գագիկ Բեգլարյանին: Սակայն, ինչպես պարզվեց, վերջինիս պահվածքը որքան էլ անընդունելի էր այն ժամանակ, այժմ մղվել է հետին պլան: Արդյունքում, Գագիկ Բեգլարյանը, անհասկանալի տրամաբանությամբ նշանակվել է տրանսպորտի եւ կապի նախարար՝ առաջացնելով հասարակության տարակուսանքը եւ վնասելով նախ եւ առաջ նախագահի վարկանիշին:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Սերժ Սարգսյանը 7 տոկոս տնտեսական աճի ապահովման պահանջ դրեց

1-ին էջից

Նրա ներկայացմամբ՝ կառավարության ծրագիրը հիմնված է լինելու երեք հիմնական գերակայությունների վրա՝ տնտեսության մրցունակության բարձրացում՝ որպես երկարաժամկետ կայուն աճի գլխավոր պայման, մարդկային կապիտալի զարգացում, ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում:

Ըստ վարչապետի, կառավարությունը ծրագրի իրականացմամբ 2012-2017 թվականների ընթացքում նպատակադրում է՝

զարգացած երկրների համեմատ տնտեսական աճի առաջանցիկ տեմպերի ապահովում՝ համախառն ներքին արդյունքի 5-7 տոկոս աճի ապահովման միջոցով,

ներմուծման նկատմամբ արտահանման աճի առաջանցիկ տեմպերի ապահովում,

նվազագույն աշխատավարձի մակարդակի առնվազն կրկնապատկում,

նվազագույն աշխատավարձ/աղքատության ցուցանիշի առնվազն 140 տոկոս մակարդակի ապահովում,

ծնելիության գումարային գործակցի աճ՝ մինչեւ 1,8-ի,

5-6 տարեկան երեխաների համար նախադպրոցական կրթության առնվազն 90 տոկոսով հասանելիության ապահովում,

միջին աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակի մակարդակի բարձրացում՝ հասցնելով աղքատության գծի համեմատ 125-135 տոկոսի,

աղքատության կրճատման ապահովում՝ 8-10 տոկոսային կետով,

100 հազարից ավելի նոր աշխատատեղերի ստեղծում, ընդ որում, ոչ գյուղատնտեսական զբաղվածների թիվը կավելանա 30-50 հազարով,

պետական եկամուտների հավաքագրման մակարդակի աճի ապահովում՝ տարեկան համախառն ներքին արդյունքի 0,3 - 0,4 տոկոսային կետի չափով:

Վարչապետի ելույթից հետո նախագահ Սերժ Սարգսյանը նշեց, որ ծավալուն եւ դժվար խնդիրներ պետք է լուծի կառավարությունը, բայց ոչ որ չպետք է կասկածի, որ այդ վճռականությունը նա պետք է ունենա: Ըստ նախագահի՝ կառավարության կազմում հեղափոխական փոփոխություններ չեն արվել, բայց դա չի նշանակում, որ նրանից չեն պահանջելու հեղափոխական արդյունքներ: Սերժ Սարգսյանը պահանջեց առանձնահատուկ ուշադրություն դարձնել գյուղին եւ գյուղատնտեսությանը, իսկ կառավարության առջեւ դրեց 2012-ին 7 տոկոս տնտեսական աճ ապահովելու հանձնարարությունը: «Սա է լինելու ձեր աշխատանքի առաջին ցուցիչը», նշեց նա՝ ավելացնելով, որ 2013-ի նախագահական ընտրությունների ժամանակահատվածում ազգային վիճակագրական ծառայությունը կամփոփի անցյալ տարվա եւ 5 տարիների արդյունքները: «Այդ ժամանակ էլ հնարավություն կտանանք գնահատելու կառավարության աշխատանքը», եզրափակեց նախագահը:

ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔՈՎ

Ադրբեջանի օգտին լրտեսած խումբը դիմել է Վերաքննիչ դատարան

1-ին էջից

Նախորդ տարվա սկզբներին Թուրքիայում նա հայտնվել է Ադրբեջանի հետախուզական ծառայությունների տեսադաշտում եւ այդ ծառայությունների աշխատակցից ստացել համագործակցության առաջարկ՝ համապատասխան վարձատրության դիմաց:

«Հավաքագրվելով հետախուզական ծառայությունների աշխատակից Տիգրան եւ Վարդան անուններով անձնավորություններից, Մեհրաբյանը ստացել է կոնկրետ գրավոր առաջադրանքներ ԼՂՀ ՊԲ վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու ուղղությամբ, այդ թվում՝ ՊԲ անձնակազմի, զենքի, զինամթերքի եւ զինտեխնիկայի քանակի եւ տեսակի, զորամասերի եւ դրանց հրամանատարական կազմի, պաշտպանական շրջանների, ինժեներական կառույցների, սարքերի եւ սարքավորումների վերաբերյալ», ասված է մեղադրական եզրակացությունում: Վերադառնալով Հայաստան՝ Մեհրաբյանը ծանոթացել է ՀՀ ՊՆ աշխատակիցների եւ ԼՂՀ քաղաքացիների հետ՝ նրանցից ինֆորմացիա ձեռք բերելու նպատակով: Նախորդ տարվա հուլիսի 23-ին նա մեկնել է Թուրքիա՝ հավաքած տեղեկատվությունը գաղտնի ծառայության աշխատակիցներին փոխանցելու, սակայն հայ-վրացական սահմանը հատելիս լրտեսության ձեւով պետական դավաճանության մեջ կասկածանքով ձերբակալվել է:

Ռոմիկ Մաթեւոսյանը 2007-ին Թուրքիայում ծանոթացել է Ադրբեջանի հետախուզական ծառայությունների հետ առնչություն ունեցող Սայիդի եւ Ադրբեջանի հետախուզական ծառայությունների աշխատակից Տիգրանի հետ եւ ստացել առաջադրանք՝ Թուրքիա աշխատելու նպատակով ժամանած ՀՀ քաղաքացիներից գտնել հավաքագրման համար հավանական անձանց: Վերադառնալով Հայաստան՝ Մաթեւոսյանը փորձել է հատկապես զինծառայողներից տեղեկություններ հայթայթել:

Աշոտ Չթրկյանը Թուրքիա է մեկնել ընկերոջ՝ Կարեն Մեհրաբյանի առաջարկով: Այնտեղ ծանոթացել է Սայիդի եւ Տիգրանի հետ: Տեղեկանալով, որ ընկերը վարձատրության դիմաց աշխատում է նրանց համար եւ գաղտնի տվյալներ հավաքագրում, Չթրկյանը համաձայնել է օժանդակել Մեհրաբյանին:

Ամբաստանյալ Կարեն Պետրոսյանն էլ տեղյակ է եղել, որ նախկին գործընկեր Կարեն Մեհրաբյանը պետական սահմանի, Հայաստանի զինուժի բաշխման վերաբերյալ տեղեկություններ է հավաքագրում հակառակորդ կողմին տրամադրելու նպատակով: Նրան մեղադրանք է առաջադրվել, որ գիտենալով նախկին գործընկերոջ դավաճանական ծրագրերի մասին, իրավապահ մարմիններին չի տեղեկացրել: Կարեն Մեհրաբյանը Արթուր եւ Դավիթ Ավետիքյանների հորքրոջ աղջկա ամուսինն է: Նրանք նույնպես տեղյակ են եղել ազգականի գործունեության վերաբերյալ, սակայն իրավապահ մարմիններին չեն հայտնել:

ՀՀ ԱԱԾ մարմիններում քննվող գործերով վարչության ավագ դատախազ **Արամ Ամիրզադյանը «Ազգ»**-ի հետ զրույցում շեշտել էր, որ պետական դավաճանության մեջ մեղադրվող 3 հայ երիտասարդների նկատմամբ առաջադրված մեղադրանքը հիմնավոր է: «Այստեղ մենք գործ ունենք պետական դավաճանության հետ, որը առավել մեծ նշանակություն ունի պետության անվտանգության համար: Ադրբեջանական հատուկ ծառայությունների համար Հայաստանը, մանավանդ Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանությունը, ԼՂ պաշտպանության բանակի գործունեությունը մեծ հետաքրքրություն են ներկայացնում», դատավարության ժամանակ ասել էր Ամիրզադյանը՝ հավելելով, որ եթե դատարանում հաստատվի Մեհրաբյանի, Չթրկյանի եւ Մաթեւոսյանի մեղքը, նրանց սպասում է 10-15 տարվա ազատազրկում:

Մի քանի ամիս տեւած դատավարությամբ դատավորի հրապարակած վճռով Կարեն Մեհրաբյանը դատապարտվեց 14 տարվա ազատազրկման, խմբի մյուս անդամներ Ռոմիկ Մաթեւոսյանը եւ Աշոտ Չթրկյանը՝ 10-ական տարվա ազատազրկման:

Ռոմիկ Մաթեւոսյանը վաստակաշատ է, հիվանդ է տուբերկուլյոզով, երկու անգամ հոգեբուժարանում է եղել:

Կարեն Պետրոսյանը, որը մեղադրվում էր հանցագործությունն իմանալու եւ չհայտնելու համար, դատապարտվեց 1.5 տարվա ազատազրկման եւ կալանավորվեց դատարանի դահլիճում:

Եղբայրներ Արթուր եւ Դավիթ Ավետիքյանները, որոնք նույնպես մեղադրվում էին հանցագործության մասին իմանալու եւ չհայտնելու համար, մեղավոր ճանաչվեցին: Արթուրը, որը բնութագրվում է դրական եւ խնամքին ունի անչափահաս երեխա, դատապարտվեց 1.5 տարվա ազատազրկման, իսկ Դավիթի հանդեպ կիրառվեց տուգանք՝ 500 հազար դրամի չափով: Կարեն Մեհրաբյանը, Աշոտ Չթրկյանը եւ Ռոմիկ Մաթեւոսյանը մեղադրվում են առավել ծանր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 299-րդ հոդվածի 1-ին մասի (պետական դավաճանությունը) հատկանիշներով հանցանք գործելու համար:

Իսկ մյուս երեքը՝ Կարեն Պետրոսյանը, Արթուր Ավետիքյանը եւ Դավիթ Ավետիքյանը մեղադրվում են ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասի (հանցագործության մասին չհայտնելը) հատկանիշներով:

Վերոնշյալ 6 անձինք չեն ընդունել իրենց մեղքն ու դիմել են Վերաքննիչ դատարան: Երեկ Փաստաբանների պալատում Ռոմիկ Մաթեւոսյանի փաստաբան Սարգիս Ասլանյանի ներկայացմամբ՝ իր պաշտպանյալի գլխին սարքել են, Ռոմիկը դավաճանության չի զբաղվել, «սակայն նրա ճակատին կոցրին ազգի դավաճան պիտակն ու դատապարտեցին 10 տարվա ազատազրկման»: Փաստաբանի ներկայացմամբ՝ Ռոմիկն ընդամենը Կարեն Մեհրաբյանի ծանոթն է եւ դրա համար է դատապարտվել, իսկ նրան ձերբակալել են, որպեսզի անվտանգության ծառայողների աշխատանքն առավել ցայտուն լինի, որ ցույց տան, թե կարողացել են վեց հոգու ձերբակալել: Թեոդոս Ասլանյանը նշում էր, որ փաստեր չկան, սակայն որեւէ կերպ իր խոսքերը չէր հիմնավորում, փոխարենն անընդհատ կարդալով գործից հատվածներ հավելում՝ հասկացա՞ք, որ գլխին սարքում են:

Պետական դավաճանության մեջ մեղադրվող 6 անձանց դատավարությունը Վերաքննիչ դատարանում կմեկնարկի հունիսի 20-ին, ժամը 12-ին:

Թուրքական ձեռքումներ

«Թերեւս կարելի է հանդիպել Գերմանիայում Թուրքիայի դեսպանի հետ

Ամենակարեւորը, սակայն, ինչ չեւով հանդիպելն է եւ ինչ ասելը»

Գերմանաբնակ մեր հայրենակից Միհրան Դաբաղը հանրաճանաչ գիտնական է, գլխավորում է Բոխումի համալսարանի Սփյուռքի եւ ցեղասպանության ինստիտուտը: Պարոն Դաբաղը վերջերս Հայաստանում էր, այցելեց «Ազգի» խմբագրություն: Օգտվելով առիթից՝ հարցազրույցի խնդրանքով դիմեցինք նրան: Թեման հետաքրքրական է, իսկ պատասխանները՝ գուցե մի փոքր անսովոր, սակայն միշտ՝ դիպուկ, ճշմարիտ եւ հավաստի:

- Թուրքիայի արտգործնախարարությունը հայկական սփյուռքի հետ մերձենալու կուրս է վերցրել՝ Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին նախատեսվող միջոցառումներն ու հավանական նախաձեռնությունները հակակշռելու նկրտումով: Հակակշռելու առումով թուրքերը Գերմանիայում որեւէ քայլ կատարե՞լ են, ի՞նչ կարգի են դրանք:

- Վերջին օրերին Գերմանիայում Թուրքիայի դեսպանը հանդիպում ունեցավ Գերմանիոյ հայոց թեմի առաջնորդարանում եւ արժանացավ համայնքի, ավելի շուտ՝ առաջնորդի ջերմ ընդունելությանը: Թուրքիայի դեսպանը առանձին քաղաքական այցելություն չէր կատարել: Նա առաջնորդարան էր եկել իր շախմբով եւ տեսագրել հանդիպման ողջ ընթացքը: Այս տեսագրությունը կարելի է գտնել ինչպես «Ակոս»-ի ու թուրքական թերթերի, այնպես էլ դեսպանատան պաշտոնական կայքէջում: Այդպիսի քաղաքականություն, ինչպես արդեն դուք նշեցիք, արդեն կիրառվում է, դեռ թուրքական թերթերում էլ գրում են, որ չպետք է զուտ Հայաստանով բավարարվել, այլ բարելավել հարաբերությունները նաեւ հայկական սփյուռքի հետ: Կարելի է վերհիշել Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուի խոսքերը, թե սփյուռքի հայկական համայնքները իրե՛նց համայնքներն են, քանի որ նրանք Թուրքիայից են մեկնել կամ մեկնածների զավակներն են: Սիրաշահելու միտված օսմանյան կամ թուրքական քաղաքականությունը ներկայացնելու հարկ չկա, պարզապես սփյուռքը իբրեւ հայկական կառույց ուշադրության ավելի մեծ առարկա է դառնում Թուրքիայի քաղաքականության Հայոց ցեղասպանության ժխտողականության կամ հարաբերականացման համար: Այս այցելությունը չէր կատարվել խորհրդակցական նպատակով որոշ հարցերի շուրջը Գերմանիոյ հայոց թեմի առաջնորդ Գարեգին Բեկչյանի կարծիքն իմանալու համար, այլ այսպես կոչված խորհրդանշական քաղաքականության դրսեւորում էր: Հանդիպումը նպատակ ուներ ցույց տալ, թե հայկական համայնքին ինչպիսի մոտեցում է դրսեւորում Թուրքիան, կամ համայնքի ներկայացուցիչները ինչպիսի բարեկամական եւ ջերմ վերաբերմունք ունեն թուրքերի նկատմամբ, որոնք իրենց դահիճներն են համարվում: Սա ռազմավարական առաջադրանք է, այս կարգի հանդիպումներ կլինեն նաեւ ապագայում: Եթե հարցնեք. «Դուք ինչպե՞ս եք վերաբերվում համայնքի ներկայացուցիչների կամ առաջնորդի հետ դեսպանի հանդիպումներին», ապա պիտի ասեմ, որ պարտադիր չէ անպայման մերժել հանդիպում խնդրող դեսպանին, այլ որպես քաղաքավարության նշան պետք է ընդունել, սակայն նախքան ընդունելը պետք է ճշտել, թե դեսպանը ինչ նպատակով է գալիս եւ որ հարցերի շուրջը պիտի զրուցի: Ելնելով հարցերի բնույթից, կարելի է որոշել՝ մերժե՞լ, թե՞ ոչ: Զուտ քաղաքավարության այցի դեպքում չի կարելի մերժել, բայց դա պետք է լինի անձնական նախաձեռնությամբ, այլ ոչ թե այդպիսի ճոխ ծրագրով: Կարելի է մի գավաթ սուրճ էլ հյուրասիրել դեսպանին, պայմանով՝ որ մի փիչ դառը լինի, դրա հետ, սակայն, պետք է ներկայացնել մեր համայնքի դիրքն ու կեցվածքը որոշակի հարցերի շուրջը, այլ ոչ թե թույլ տալ ամբողջ հանդիպումը տեսագրել, որ օգտագործվի քարոզչության նպատակով:

Այստեղ ես վստանգավոր եմ համարում հաշտեցման երկխոսության քաղաքականությունը, որը խթանում է նաեւ Արեւմուտքը, ինչպես նաեւ հանդիպման արեւելյան ձեւավորումը, այսինքն՝ համբույրը: Մեր առաջնորդը Թուրքիայի դեսպանին ոչ միայն ջերմ ընդունեց, թույլ տվեց տեսագրել հանդիպման ողջ ընթացքն ու խնդրեց գրառում անել հուշամատյանում, այլեւ հրաժեշտի պահին նույնիսկ համբուրեց: Ընդ որում այս դեսպանը Հայոց ցեղասպանություն ուրացողների մեջ առանցքային դեր ունի Գերմանիայում, այսօրվա թուրքական իշխանության գաղափարախոսներից է, եղել է նախագահ Աբդուլլահ Գյուլի խորհրդականը:

- Պարո՛ն Դաբաղ, արտգործնախարար Դավութօղլուն սփյուռքի հետ մերձենալու հրահանգ է տվել բոլոր դեսպաններին: Թուրքերը չեն թաքցնում, որ այս մերձեցումը նպատակաուղղված է հակակշռելու Մեծ եղեռնի 100-րդ տարելիցը, որպեսզի «փիչ կորուստներով» անցկացնեն: Հետեւաբար, դեսպանի նպատակը չպետք է նորություն լիներ թեմի առաջնորդի համար: Եթե հիշում եք, փետրվարի 26-ին Ստամբուլում թուրքական կառավարությունը 100-հազարանոց հանրահավաք էր կազմակերպել «Բոլորդ հայ եք, բոլորդ վիժվածք» մակագրությամբ ցուցապաստառներով եւ մասնակիցների առջեւ ելույթ էր ունեցել Թուրքիայի ներքին գործերի նախարարը, կարծես օրինականացնելու հայերին վիժվածք անվանելու թուրք-ադրբեջանական ոճակի այս անպատկառությունը:

- Շնորհակալություն, որ այդ հանրահավաքի օրինակը բերեցիք, որովհետեւ այդպիսի հանդիպումները որեւէ անկեղծ զգացմունքի արտահայտություն չեն, այլ՝ խորհրդանշական քաղաքականության արդյունավետ միջոց: Դրա նպատակը հայերի աղետալի փորձության ժխտումն է, համայնքի դիրքերի տկարացումը: Անշուշտ, Գերմանիոյ հայոց թեմի առաջնորդը տեղյակ էր այդ մասին: Ինքը՝ որպես Պոլսո հայոց պատրիարքության թեկնածու, կարծում էր, որ չպետք է մերժի Թուրքիայի դեսպանի հանդիպման խնդրանքը եւ իրականացրեց, ինչը, իմ կարծիքով, պատվաբեր չէ իր համար: Այստեղ խնդիրը Գարեգին եպս. Բեկչյանը չէ, այլ Հայոց ցեղասպանության ուրացման պայքարը: Սա այնքան քաղաքականացվել է, որ մենք մանրամասներին ուշադիր լինելու կամ որոշ արտահայտություններ ձեւակերպելու մեջ որոշակի տկարություն դրսեւորում, պայմանավորված ցեղասպանության ճանաչման մտածողության զարգացածության ոչ բավարար մակարդակով, որը ցավոք, նկատվում է մեզ մոտ: Ինձ մտահոգում է նաեւ այն, որ Գերմանիայում Թուրքիայի դեսպանի այս ձեռնարկումը հաջողություն կունենա հայկական մյուս համայնքներում, որովհետեւ հստակ որոշումներ, հստակ արտահայտություններ, նաեւ կրոնական իշխանություններից, դեռեւս չենք լսել:

- Թուրքիայի դեսպանի հետ հանդիպման այդ տեսագրությունը ինքնին թուրքական քարոզչության համար կարեւոր նյութ է: Ըստ երեւույթին լավ կլիներ, եթե հանդիպմանը դեսպանին հիշեցնեին «Բոլորդ հայ եք, բոլորդ վիժվածք» ցուցապաստառներով հանրահավաքի մասին, եւ դա պարտադիր չէ, որ աներ հենց Գարեգին արբազանը, այլ՝ ներկաներից որեւէ մեկը, գոնե ցույց տալու համար մերձեցման անհամատեղելիությունը թուրքական կառավարության կազմակերպած այս հայատյաց հանրահավաքի հետ:

- Հանդիպմանը այս հանրահավաքի մասին ոչ մի ակնարկ չարվեց: Ավելին, դեսպանի՝ «Այս համայնքները իմ համայնքներն են» արտահայտությունը նույնպես ոչ մի հակազդեցության չարժանացավ: Մինչդեռ դա առիթ էր նշելու, որ այդ համայնքները ցեղասպանության հետեւանքն են: Այլ կերպ, այս հանդիպումով քարոզչության նպատակ հետապնդող խորհրդանշական քաղաքականությունը ամենահաջող կերպով դրսեւորվեց: Սփյուռքահայ հաստատությունները պետք է անպայման պատասխանեն թուրքական այս կեղծ մոտեցմանը եւ դրա համար մենք բոլորս պետք է պատասխանատու լինենք քննադատելով նրանց, ովքեր ընդառաջելով թուրքական այս կեղծ քաղաքականությունը՝ ինքնակամ դրա զոհն են դառնում:

- Ի՞նչ վերաբերմունք ցուցաբերեց գերմանահայ համայնքը:

- Համայնքն, իհարկե, հավանություն չի տալիս: Կա ակնհայտ ընդվզում, որովհետեւ դա հակասում է մեր բոլոր ջանքերին ու աշխատանքներին: Հետեւաբար զգուշանալ է պետք: Ասեմ նաեւ, որ այս զգուշությունը դրված է նաեւ հայաստանյան իշխանության ներկայացուցչի վրա: Համենայն դեպս Գարեգին արբազանը գիտեր եւ ծանոթ էր Թուրքիայի դեսպանի մտադրություններին: Հանդիպելչհանդիպելու հարցը վիճելի է, կարելի է քննարկել: Սակայն ամենակարեւորը ինչ ձեւով հանդիպելն է եւ ինչ ասելը: Թուրքական կողմը հանդիպումից առաջ պարզորոշ պետք է իմանա, որ մեր դիրքորոշումը Մեծ եղեռնի հարցում ավելի քան հստակ է, եւ մենք այդ հարցը որեւէ ձեւով քննարկման առարկա չենք դարձնում: Այլ ոչ թե տուրք տալ թուրքական կեղծ քաղաքականությանը, նաեւ կեղծավորությանը, որովհետեւ, ինչպես արդեն նշեցիք, արտգործնախարարի հրահանգով հայկական սփյուռքի հետ մերձեցող այդ նույն կառավարությունը Ստամբուլում կազմակերպել էր այդպիսի հայատյաց խայտառակ հանրահավաք:

- Ի դեպ, 2009-ին, եթե չեմ սխալվում, նոյեմբերին, ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը թուրքական հանրային հեռուստատեսության էկրանից ասել էր. «Եթե որեւէ մեկը կարծում է, որ հանուն Թուրքիայի հետ հարաբերությունների Հայաստանը զիջումներ կանի Հայոց ցեղասպանության եւ Լեռնային Ղարաբաղի հարցերում, չարաչար սխալվում է: Մենք զիջումներ չենք արել, չենք անում եւ չենք անելու»:

- Հայաստանի ներկա կառավարության այս հստակ կեցվածքը ինձ մեծ ուրախություն է պատճառում: Որոշ շրջանակներ այդ ուղղությամբ որոշակի դժգոհություն էին արտահայտում: Սակայն մեր քաղաքականությունը հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումից հետո դարձել է շատ սթափ, շատ հստակ, որեւէ կասկածի տեղիք չի տալիս: Դա որոշակի պատասխանատվություն է դնում սփյուռքի հաստատությունների եւ հատկապես եկեղեցականների ուսերին, որպեսզի նրանք զերծ մնան անհաշվենկատ քայլերով հայաստանյան իշխանությունների վճռական քաղաքականությունը հարաբերականացնելու դրսեւորումներից: Եկեղեցականների առումով թերեւս հատկանշական են Կ. Պոլսո երջանկահիշատակ պատրիարք Շնորհք արք. Գալստյանի խոսքերը: Ես շատ մտերիմ եմ եղել իր հետ: Մի առիթով ասել էր. «Թուրքական կառավարությունը անընդհատ հայտարարություններ էր ներկայացնում ինձ: Ոչ մեկը չստորագրեցի: Եվ որքան լռեցի, այնքան հարգանք ստացա»:

ՎԱՀՈՒ ՉԱՔԲԱՆ

Ինչպես էր Ադրբեջանը գաղութացնում Լեռնային Ղարաբաղը

2-րդ էջից

Սա ամենահիսկական գաղութային շահագործում էր: Ի դեպ, ԽՍՀՄ բարձրագույն իշխանություններին 1966 թ. «13»-ի հղած հայտնի նամակում հիմնավորապես ապացուցված է հենց այդ խտրական վերաբերմունքը: Այն, որ գյուղատնտեսական գրեթե ողջ արտադրանքը ԼՂԻՄ-ից իբրեւ հումք արտահանվում եւ վերամշակվում է հարակից ադրբեջանաբնակ շրջաններում: Ուղղակի փարիսեցիություն է Day.az-ի պնդումը, որ ԼՂԻՄ-ում մեկ շնչի հաշվով եկամուտները կազմում էին 1113,5 ռ., որը միջին հանրապետական ցուցանիշը գերազանցում էր 97,8, իսկ Նախիջեւանի ԻԽՍՀ-ինը՝ 170,4 ռուբլով: Եթե ինքնավար մարզը տալիս էր Ադր. ԽՍՀ գյուղատնտեսական ամբողջ արտադրանքի 5 տոկոսը, բնական է, որ մարդկանց եկամուտներն էլ պիտի բարձր լինեին: Դեռ խնդիր է՝ ինչքան կլիներ մեկ շնչի հաշվով եկամուտը, եթե ԼՂԻՄ-ում գործեր տնտեսական սկզբունքը, այսինքն՝ մարդիկ իրենց արտադրածի տերը լինեին:

Ամենազավեշտալին այն է, որ, իբրեւ «հոգատարության» նմուշ, Day.az-ը վկայակոչում է, որ 1987 թ. հանրապետական բյուջեից ԼՂԻՄ-ին հատկացվել է 37, 7 մլն. ռուբլի: Չի ասվում, թե նույն տարում որքա՞ն էր Նախիջեւանի ԻԽՍՀ բյուջետային ֆինանսավորումը: Բայց դա էական չէ: Ներկայումս ԼՂՀ համախառն բյուջեն ավելի քան 180 մլն. ԱՄՆ դոլար է: Համեմատենք այս թիվը խորհրդային 37,7 մլն. «փայտե» ռուբլու հետ եւ պարզ կդառնա, թե որքան «առատառաձեռն էր» Բաքուն Լեռնային Ղարաբաղի «սոցիալ-տնտեսական զարգացումն ապահովելու հարցում»: Ավելացնենք նաեւ, որ նույն տարում ԼՂԻՄ-ում արտադրվել է միայն 150 հազ. տոննա խաղող, որի արդյունքային արժեքն ավելին էր, քան «հանրապետական բյուջեից» ԼՂԻՄ-ին արված հատկացումը:

Ի վերջո Day.az-ը անդրադառնում է «հայկական եւ ադրբեջանական բնակչության հարաբերակցությանը» եւ այն «բացատրում» ոչ միայն ադրբեջանցիների շրջանում «բարձր ծնելիությամբ, այլեւ ԼՂԻՄ-ի սահմաններից դուրս հայ բնակչության միգրացիայով»: Ընդսմին, անանուն հեղինակը ցինիկաբար գրում է, որ 1970-79 թթ. ԼՂԻՄ բնակչությունն աճել է 12 հազ.-ով, որից հայերին բաժին է ընկել 2, ադրբեջանցիներին՝ 10 հազարը: Սա այն է, ինչ հայկական աղբյուրներն անվանել են «սպիտակ ցեղասպանություն»:

Ամփոփելով կարող ենք վստահաբար ասել, որ նույնիսկ ադրբեջանական պաշտոնական աղբյուրների հրապարակած վիճակագրական տվյալներն ապացուցում են, որ Ադր. ԽՍՀ կազմում ԼՂԻՄ-ը հետեւողականորեն գաղութացվում էր: Բռնաճնշվում էր ինքնավար մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը, ինչի հետեւանքով բնակչությունն ստիպված էր լինում արտագաղթել: Եթե դրան ավելացնենք նաեւ հոգեւոր-մշակութային եւ կրթադաստիարակչական ոլորտի ակնհայտ խեղաթյուրումները, ապա պատկերն ավելի ամբողջական կդառնա:

Ընդ որում, դա արվում էր մի երկրում, որտեղ Ադր. ԽՍՀ-ն օժտված չէր ինքնիշխանությամբ: Հետեւաբար, անկախ եւ ինքնիշխան Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղը դատապարտված էր լինելու էլ ավելի ստորացուցիչ եւ հետեւողական բռնաճնշումների: Իսկ դա ենթադրում է, որ ներկա իրողությունները միայն եւ միայն ԼՂ-ում մեծամասնություն կազմող հայ բնակչության անվտանգությունը եւ ազատ կենսագործունեությունը ապահովելու միջոց են: Միջոցներ, որ այլընտրանք չունեն: Մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի անկախությունը:

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԱԶԳ **Միջազգային**

Դիկտատորները փոխվում են

Կամ բոլորը դառնում են դիկտատոր

Մեր գիտակցության մեջ դիկտատորը (բռնակալը) այն առաջնորդն է, որ դաժան է ու անողոքժելի՝ միառժամանակ: Ով երբեք ու ոչ մի հարցում չի լսում, էլ չասենք՝ չի ենթարկվում այն ժողովրդին, ում կառավարում է, ճնշում է ժողովրդական ընդվզում խիստ դաժանորեն, հաճախ անգամ այդ ընդվզումը դեռ չսկսված, հենց «օրորոցում»: Մի ընդհանուր խոսքով՝ դիկտատորը մեզ համար ամենակարող առաջնորդն է, ումից վախենում են ու ենթարկվում:

Արեւմտյան վարկածով նման դիկտատորներ էին ու են Լիբիայի առաջնորդ Մուամմար Քադդաֆին, Եգիպտոսի նախկին նախագահ Հոսնի Մուբարաքը, Թունիսի նախկին նախագահ Բեն Ալին, Լիբերիայի նախկին նախագահ Չառլզ Թեյլորը, Սիրիայի նախագահ Բաշար Ասադը, անգամ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինն իր բելառուս գործընկերոջ՝ Ալեքսանդր Լուկաշենկոյի հետ: Հասարակական ճնշումների հիշյալ առաջնորդները անխոս գնացել են եւ գնում են, սակայն մի՞թե, օրինակ, նախագահ Ասադի որդի բողոքի բազմահազարանոց հրապարակային ցույցեր տեղի չեն ունենում, հենց միայն դա ապացուցում է, որ Ասադը դասական իմաստով բռնակալ չէ: Արդյո՞ք նախագահ Պուտինը ռուսաստանցիներին «չի լսում» կամ մի՞թե Բելառուսում մարդիկ ապրում են ինչպես բռնապետությունում, իհարկե՝ ոչ:

Հետեւաբար, դիկտատորներն այսօր փոխվել են, ու նրանք այլեւս այն գործելակերպը չունեն, որը գործածողին մենք կոչում էինք բռնակալ:

Այսօր դիկտատորը հասկանում է, որ ինքը չի կարող ոչնչացնել իր դեմ բողոքի ելած բազմությանը ու միջադեպը թաքցնել, քանի որ նման պատահարն արագորեն հայտնվում է YouTube-ում: Հետեւաբար ժամանակակից դիկտատորը ժամանակակից տեխնոլոգիական նորույթներին ծանոթ է՝ մեղմ ասած: Օրինակ՝ Հարավարդի համալսարանի քաղաքագետները Չինաստանում իրականացրել են ուսումնասիրություն: Պարզվել է՝ Չինաստանում համացանցային, սոցիալական կայքերում սահմանափակում է դրվում ոչ թե կառավարության քաղաքականության քննադատությանը, այսպիսի հրապարակային քննադատությանը հարվարդցիները բազմիցս են հանդիպել չինական համացանցի տիրույթում, այլ «այդ քննադատության դաշտում համախմբմանը»: Այս ուսումնասիրությունը բավական խոսուն կերպով ցույց է տալիս ժամանակակից դիկտատորի գործունեության փոփոխությունը. եթե նախկինում դիկտատորը թույլ չէր տալիս իր հասցեին որեւէ քննադատություն, փակում էր՝ ինչով ասես ու ինչպես ասես այդ բերանները, ապա այժմ դիկտատորները առանձին-առանձին քննադատություններ թույլ տալիս են, երբեմն անգամ՝ խրախուսում, որոշակի հասարակայնորեն լայն բարձրացված խորհուրդներ լսում, սակայն թույլ չեն տալիս երբեք քննադատական ալիքի մասսայականություն:

Եվս մի օրինակ կարելի է բերել Ռուսաստանից: Ամեն ինչ վերահսկել սիրող Պուտինին, գաղտնիք չէ, որ առավելաբար, եթե ոչ բացառապես, քննադատում է միայն տպագիր մամուլը (իհարկե նաեւ համացանցային որոշ կայքեր): Սակայն Ռուսաստանում տպագիր մամուլ կարդում են առավելաբար Մոսկվայում ու Սանկտ Պետերբուրգում, իսկ ռուսաստանցիների հիմնական լրատվամիջոցը հեռուստատեսությունն է, որը ամբողջությամբ վերահսկում է Կրեմլը: Ստացվում է, որ Ռուսաստանում, ինչպես նաեւ նույն Չինաստանում, Վենեսուելայում եւ այլուր, իշխանությունը վերահսկում է հասարակության ամենալայն հատվածի համար հասանելի միակ լրատվամիջոցը, փաստորեն դարձնելով այն քարոզչամիջոց:

Անզեն աչքով էլ տեսանելի է, որ «նորդիկտատորական ռեժիմներ» հաստատվում ու ամրապնդվում են աշխարհի ոչ միայն վերոհիշյալ երկրներում: Հատկապես համացանցային տեղեկատվության այս առատությունից ու մանավանդ բազմաբովանդակ լինելուց աշխարհի երկրների առաջնորդները սեփական իշխանությունը պահելու ու ամրապնդելու համար կարիք ունեն մասսայական վերահսկողություն սահմանելու եւ սահմանում են: Նայենք մեր հարեւաններին՝ Իրան, Թուրքիա, Վրաստան, ինչ խոսք՝ Ադրբեջան: Ու արդյո՞ք Արեւմուտքում այսօր «նորդիկտատորական ռեժիմներ չեն», ու արդյո՞ք Հայաստանը ժամանակակից աշխարհի մաս չէ...

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

Ամուսնական խարդախության հետեւանքները

14 տարի առաջ Հնդկաստանի Թիանե քաղաքի բնակիչ Շամբունաթ Թիվարին ամուսնացել է մի աղջկա հետ, որին երբեւէ չէր տեսել եւ միայն ամուսնությունից հետո էր իմացել, որ դարձել է խաբեության զոհ:

14 տարի պայքարելուց հետո Շամբունաթին հաջողվել է ազատվել կեղծ ամուսնությունից, արդեն ամուսնալուծված ժամանակ նա համաձայնել է խաղալ իր կյանքի մասին պատմող ֆիլմում եւ մարմնավորել գլխավոր հերոսի դերը:

Ֆիլմի ու նրա ամուսնության պատմությանն անդրադարձել է «Մումբայ միրոր» թերթը, որից օգտվելով ստորեւ՝ ֆիլմի ու նկարահանելու գաղափարի մասին:

32-ամյա Շամբունաթը գործարար է ու զբաղվում է հագուստի բիզնեսով, ծագումով Հնդկաստանի Ուտար Պրադեշ նահանգի Ալլահաբադ քաղաքից է, ուղղափառ ընտանիքից: 1998 թվականին Վարանասի քաղաքից մի ընտանիք մոտենում է նրան ու առաջարկում իրենց դստեր ձեռքը: Աղջկա ծնողները նրան ցույց են տալիս մի կնոջ նկար ու պնդում, որ նկարում իրենց դուստրն է: Շամբունաթն իր ծնողների հետ խորհրդակցելուց հետո համաձայնում է ամուսնանալ անծանոթ աղջկա հետ:

Քանի որ Շամբունաթի ընտանիքը հավատարիմ էր ավանդական արժեքներին, նրանք հարսնացուին խնդրում են հարսանեկան ողջ արարողության ընթացքում դեմքը ծածկած պահել: Սակայն հարսին տուն տանելուց հետո տեսնում են՝ նա նույն աղջիկը չէ, որի նկարն իրենց ցույց էին տվել:

Շամբունաթի ընտանիքը մեղադրում է աղջկա ծնողներին իրենց խաբելու մեջ եւ պահանջում հարսանիքը չեղյալ հայտարարել:

Սակայն նորահարսի ծնողներն իրենց հերթին մեղադրում են տղայի ընտանիքին, որն իբր ձգտել է իրենցից ավելի շատ օժիտ ստանալ: Հնդկաստանում քիչ չեն դեպքերը, երբ ամուսնությունից հետո ամուսինը տարբեր նկատառումներով կնոջից պահանջում է պայմանավորված օժիտից ավելին:

Տղային օժիտի հանդեպ ոտնձգության մեջ մեղադրելուց հետո նորահարսի ծնողները բողոք են ներկայացնում ոստիկանություն, ինչին էլ հաջորդում է Շամբունաթի ձերբակալությունը: Այնուամենայնիվ, Շամբունաթը շարունակում է պայքարել՝ դիմելով Ալլահաբադի դատարան: Սակայն դատական գործընթացը տարիներով ձգձգվում է, ու միայն այս տարվա ապրիլին դատարանը վերջապես կայացնում է վճիռը հօգուտ տղայի՝ հանելով օժիտի հանդեպ ոտնձգության մեղադրանքը: Դատարանը նաեւ պահանջում է աղջկա ընտանիքից՝ ներողություն խնդրել տղայից:

«Մինչ դատավճիռն անցա դժոխքի միջով, իսկ դատավճռից հետո կատարածը պատմեցի ընկերոջս՝ Աման Քոհրիին, եւ միասին որոշեցինք իմ պատմության հիման վրա ֆիլմ նկարահանել», պատմում է Շամբունաթը:

Ֆիլմը կոչվում է «Ամուսնություն 98», ռեժիսորն Աման Քոհրին է: Արդեն ամուսնալուծված Շամբունաթը հավատում է՝ ֆիլմը կծառայի որպես նախազգուշացում տղամարդկանց համար, հատկապես նրանց, որոնք կուրորեն համաձայնում են ամուսնանալ առանց ծանոթանալու եւ ստուգելու ապագա կնոջ ու նրա ընտանիքի պատմությունը:

Ֆիլմի հերոսն ասում է, որ կյանքի 14 տարիներն անցկացրել է փախչելով կեղծ ամուսնությունից. «Չեմ ուզում, որ մեկ ուրիշն էլ անցնի նման ծանր փորձության միջով»:

«Ամուսնություն 98» ֆիլմը մի ամսից պատրաստ կլինի եւ կցուցադրվի հինդի, բիոջպուրի եւ թամիլ լեզուներով:

Ռեժիսոր Քոհրին հավելում է, որ ֆիլմը նկարահանում են ոչ թե պարզապես փող աշխատելու համար, այլ մարդկանց իրազեկելու ամուսնական խարդախությունների մասին:

Պատրաստեց ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

ԱԹԵՆՔ

Հունաստանը մնում է եվրոգոտում

Հունաստանում կիրակի օրն անցկացված վաղաժամկետ խորհրդարանական ընտրությունների քվեաթերթիկների 97 տոկոսի մշակումից հետո պարզվել է, որ պահպանողական «Նոր ժողովրդավարություն» կուսակցությունը ստացել է քվեների 29,7 տոկոսը: Եվրոպամետ այդ ուժը պատշտպանում է Եվրամիության եւ ԱՄՀ-ի հետ Հունաստանի կնքած համաձայնագրերը, որոնք պահանջում են դաժան խնայողության միջոցների ձեռնարկում: Երեկ կուսակցությունը սոցիալիստների հետ բանակցություն է սկսել նոր կառավարություն կազմելու նպատակով, հաղորդում է Ֆրանսպրեսը:

Ձախ արմատական կուսակցությունների ՍԻՐԻԶԱ միավորումը ստացել է քվեների 27 տոկոսը: Այս միավորումը պահանջում է, որ Հունաստանը հրաժարվի վարկատուների հետ կնքած բոլոր համաձայնագրերից:

Վերջին տարիներին խորհրդարանում մեծամասնություն կազմած սոցիալիստական PASOK կուսակցությունը հունիսի 18-ի ընտրություններում ստացել է 12 տոկոս:

Հաղթող «Նոր ժողովրդավարությունը», ըստ օրենսդրության, 50 հավելյալ տեղ կստանա խորհրդարանում: Ըստ այդմ, նոր խորհրդարանում «Նոր ժողովրդավարությունը» կունենա 129 տեղ, ՍԻՐԻԶԱ-ն՝ 72, PASOK-ը՝ 33 տեղ:

Ի տարբերություն մայիսյան ընտրությունների, այժմ պահպանողականներն ու սոցիալիստները խորհրդարանում մեծամասնություն են կազմում (162 տեղ) եւ կարող են կազմել նոր կառավարություն:

«Ազգային փրկության կառավարությունը պետք է աղահովի տնտեսական աճ եւ հույներին համոզի, որ վաստակագույնը մնացել է հետեւում», հայտարարել է «Նոր ժողովրդավարության» առաջնորդ Անտոնիս Սամարասը, որի խոսքը մեջբերում է «Նյու Յորք թայմս» թերթը: Նա խոստացել է կատարել Եվրամիության եւ ԱՄՀ-ի հանդեպ Հունաստանի ստանձնած պարտավորությունները:

Նոր կառավարությունը վարկի հերթական մասը ստանալու համար պարտավոր է աղահովել բյուջեի լրացուցիչ կրճատումներ: Սակայն ընտրարավի ժամանակ «Նոր ժողովրդավարությունը» եւ PASOK-ը ընտրողներին խոստացել են հասնել ԵՄ-ի եւ ԱՄՀ-ի հետ կնքված համաձայնագրերի մեղմացմանը:

Հունաստանում բոլոր քաղաքական ուժերը օգնության 130 միլիարդի փաթեթի ներկայիս պայմանները համարում են «չափազանց խիստ»:

Երկրում տնտեսական նահանջն առկա է արդեն 5 տարի: Գործազրկության մակարդակը 20 տոկոսից բարձր է, իսկ երիտասարդության շրջանում 50 տոկոս է:

Եգիպտոսում հաղթել է «Մուսուլման եղբայրների» թեկնածուն

Իսկ զինվորականները «շտկում» են սահմանադրությունը

Նախագահական ընտրությունների 2-րդ փուլի ավարտից հետո՝ հունիսի 18-ի առավոտյան, «Մուսուլման եղբայրներ» իսլամիստական շարժման թեկնածու Մուհամմադ Մուրսին Կահիրեում իր կողմնակիցների առջեւ ելույթ ունենալով՝ փաստորեն հայտարարել է ընտրություններում սեփական հաղթանակի մասին: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

Ավելի վաղ «Մուսուլման եղբայրների» շտաբը հայտարարել էր, որ Մուրսին նախագահական ընտրություններում առաջատար է, եւ որ քվեաթերթիկների 98 տոկոսի հաշվառման արդյունքներով Մուրսին ստացել է քվեների 52 տոկոսը, իսկ Եգիպտոսի նախկին վարչապետ Ահմադ Շաֆիկը՝ 48 տոկոսը: Շաֆիկը համարվում է երկիրը ներկայումս կառավարող Բարձրագույն զինվորական խորհրդի թեկնածուն:

Շաֆիկի շտաբը հրաժարվում է ճանաչել «Մուսուլման եղբայրների» հրապարակած առայժմ ոչ պաշտոնական արդյունքները եւ խորհուրդ է տալիս սպասել պաշտոնական արդյունքների հրապարակմանը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դեռ չի հրապարակել ընտրությունների վերջնական արդյունքները: Եգիպտական լրատվամիջոցները հաղորդում են առանձին ընտրատարածքների արդյունքների մասին: Ֆրանսպրեսի տեղեկությունների համաձայն, ընտրությունների արդյունքները պաշտոնապես պետք է հրապարակվեն մինչեւ հունիսի 21-ը:

Ինչ վերաբերում է Բարձրագույն զինվորական խորհրդին, քվեարկության ավարտից արդեն մի քանի ժամ հետո խորհուրդը հայտարարել է երկրի ժամանակավոր սահմանադրության մեջ կատարվող փոփոխությունների մասին: Բարձրագույն զինվորական խորհուրդը իրեն վետոյի իրավունքով է օժտել նոր սահմանադրության այն հոդվածների նկատմամբ, որոնք «հակասում են երկրի գերագույն շահերին»: Կատարված «շտկումների» համաձայն, Եգիպտոսում նոր խորհրդարանական ընտրությունները պետք է անցկացվեն միայն նոր սահմանադրությանը վերաբերող հանրաքվեից հետո: Սահմանադրությունը պետք է պատրաստ լինի առաջիկա երեք ամսվա ընթացքում:

Իսկ Մուհամմադ Մուրսին Կահիրեում ելույթ է ունեցել իր կողմնակիցների առջեւ եւ ասել է, թե ինքը կդառնա «բոլոր եգիպտացիների նախագահը» եւ հաշիվներ չի մատուցի իր քաղաքական հակառակորդների հետ: «Փա՞ռք Ալլահին, որը Եգիպտոսը կանգնեցրեց դեպի պայծառ ապագա տանող ճիշտ ճանապարհի վրա», հայտարարել է Մուրսին:

Նա ընտրողներին հավաստիացրել է, որ մտադիր է Եգիպտոսում կառուցել «արդար, քաղաքացիական, ժողովրդավարական հասարակություն»:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՏԱԼԻԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բրունո Սկաղինի. «Հուշարձանների եւ ոռմնանկարների վերականգնման ծրագիրը առանձնահատուկ կարեւորություն ունի Հայաստանի համար»

ՀՀ մշակույթի եւ Իտալիայի արտաքին գործերի նախարարությունների միջեւ 2011թ. ապրիլի 6-ին ստորագրվել է «Աջակցություն հայկական հասատություններին տեղական մշակութային ժառանգության պահպանման եւ ամրակայման համար» տեխնիկական պայմանագիր, որի շրջանակում կիրականացվեն հետեւյալ ծրագրերը՝

«Հուշարձանների ճարտարապետական վերականգնման գծով» մասնագիտական դասընթացներ՝ Երեւանի ճարտարապետության եւ շինարարության պետական համալսարանում, որմնանկարների վերականգնման բնագավառում՝ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում, շարժական մշակութային արժեքների եւ հնագիտական արժեքների վերականգնման բնագավառում՝ ՀՀ ազգային պատկերասրահում եւ ՀՀ պատմության թանգարանում, շինհրապարակների ղեկավարների եւ վարպետների վերապատրաստում ճարտարապետական վերականգնման բնագավառում՝ վերականգնման կենտրոնում:

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Արեգ Սամուելյանը երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց. «Հայաստանի համար սա անչափ կարեւոր գործ է: Ինչպես նկատում եք, պատմամշակութային ժառանգությունը թե՛ կառավարության, թե՛ հասարակական կառույցների ուշադրության կենտրոնում է, որը շատ կարեւոր է, քանի որ մշակույթի հիմնաքարը ժառանգության պահպանումն է: Գործընթացը բաղկացած է մի քանի կարեւոր տարրերից, որոնցից մի քանիսը արդեն մեկնարկել է»:

Հնագիտական դասընթացների մեկնարկը կտրվի հունիսի 18-ին, որը կտեւի մինչեւ դեկտեմբեր, ինչն իր մեջ ներառում է թե՛ գործնական, թե՛ տեսական աշխատանքներ: Դասընթացի տեսական մասը կանցկացվի ԵՃՇՊՀ-ում, իսկ գործնական պարապմունքները՝ Արուճի պեղավայրում: Դասախոսությունները կվարեն Միլանի Պոլիտեխնիկի դասախոսները՝ Սուզաննա Բորտոլոտտոն, Անդրեա Գարձուլինոն, Մատիլդե Մարձուլլոն, Լուիջի Մարինոն, Ջովաննա Բանիասկոն, որոնց կիսեւեն 15 հնագետներ: Հայաստանում Իտալիայի դեսպան Բրունո Սկաղինին նշեց. «Այս ծրագիրը առանձնահատուկ կարեւորություն ունի, ոչ միայն երկկողմ համագործակցության առումով, այլեւ Հայաստանի համար: Հայկական կողմից ներառված են մշակույթի, կրթության եւ գիտության նախարարությունները, սակայն ֆինանսավորող կողմը Իտալիայի արտգործնախարարությունն է: Այս համագործակցությունը երկրների զարգացման համար կարեւոր գործոն է: Իտալիան շատ կարեւոր դեր է զբաղեցնում աշխարհում: Նշենք, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից համաշխարհային մշակույթի ժառանգություն ճանաչված կոթողները պատկանում են Իտալիային»:

Իսկ որմնանկարների պահպանմանը եւ վերականգնմանը նվիրված դասընթացը կմեկնարկի հունիսի 25-29-ը եւ հուլիսի 30-ից օգոստոսի 10-ը «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում:

Դասընթացը նախատեսվում է Երեւանի Գեղարվեստի պետական ակադեմիայի ուսանողների, շրջանավարտների, ճարտարապետների համար:

Դասընթացներն անվճար են:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԳԻՄՅԱՆ

Ինը ամերիկահայեր արժանացել են Էլիս Այլնդի մրցանակին

Մանհեթենի «Բեթըրի պարկում» գտնվող ամերիկյան հնդկացիների Սմիթսոնյան ազգային թանգարանում տեղի ունեցած ընդունելության հաջորդ օրը՝ մայիսի 12-ին, 104 ականավոր ամերիկացիներ լաստանավերով մեկնել են պատմական Էլիս Այլնդ՝ ստանալու իրենց շնորհված պատվավոր մեդալները: Ըստ «Արմինյն միրոր-սփեթեյթրում» Ֆլորենս Ավագյանի հաղորդագրության՝ այդ արժանավորներից ինը հայեր են եղել, որոնք «իրականություն են դարձրել ամերիկյան երազանքը»՝ մեծապես նպաստելով ամերիկյան ազգային ինքնության կայացմանը եւ միաժամանակ պահպանելով իրենց նախնիների արժեքներն ու ժառանգությունը:

Նրանց թվում են Բաբկեն Մկրյանը (որի մասին «Ազգ»-ը գրել է արդեն), Հովհաննես Ներսիսյանը, Նշան Կուսուզյանը, Հելեն Իրմա Տեր-Ստեփանյանը, Ջոյս Փիլիպոսյանը, Նենսի Արաբյանը, Դալիդա Քորոլլոյանը, Գեւորգ Գարաջերջյանը եւ Ալիս Պետրոսյանը:

Հանդիսության ավարտին նրանք բոլորը, շնորհակալություն հայտնելով, խոստացել են շարունակել իրենց բարեգործությունները ի նպաստ Մ. Նահանգների, Հայաստանի եւ Արցախի:

Հ. Ծ.

Արամ Խաչատրյանի անվան միջազգային 8-րդ մրցույթը

Սույն թվականի հունիսի 6-ից 13-ը Երեւանում ՀՀ նախագահի տիկին Ռիտա Սարգսյանի բարձր հովանու ներքո անցկացվեց Արամ Խաչատրյանի անվան միջազգային 8-րդ մրցույթը: Մրցույթը տեղի է ունենում ամեն տարի՝ «դաշնամուր», «ջութակ» կամ «թավջութակ» մասնագիտություններով: Այս տարի մրցում էին ջութակահարները:

Արամ Խաչատրյան մրցույթը կայացել է ՀՀ Մշակույթի նախարարության, «Արամ Խաչատրյան-մրցույթ» մշակութային հիմնադրամի եւ Կոմիտասի անվան Երեւանի պետական կոնսերվատորիայի շատ մեծ ջանքերի շնորհիվ: Մրցույթի գործընկերներն են ԱՊՀ անդամ երկրների հումանիտար համագործակցության միջպետական եւ Հայաստանի երիտասարդական հիմնադրամները: Մրցույթի աջակիցներն են՝ Ani Plaza եւ Golden Palace հյուրանոցները, Mozarteum ռեստորանը, HD Studio-ն:

Այս անգամ մասնակիցները Հայաստան էին եկել շուրջ 20 երկրներից՝ Ռուսաստանից, Ղազախստանից, Վրաստանից, Մոլդովայից, Ուկրաինայից, Բելոռուսից, Լեհաստանից, Չինաստանից, Կորեայից, Կոլումբիայից, Իտալիայից, Իսպանիայից, ԱՄՆ-ից, Ճապոնիայից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից:

Մրցույթի բացման հանդիսավոր արարողությունն ու գալա համերգը ավանդաբար տեղի ունեցան Ա. Խաչատրյան համերգասրահում՝ մեծ կոմպոզիտորի ծննդյան օրը: Եվ արդեն հաջորդ առավոտ կամերային երաժշտության տան օդը հագեցած էր մրցութային յուրահատուկ «բուրմունքով»: Մրցույթի առաջին փուլը սկսված էր: Հայ երաժշտասեր հասարակայնությունը մեծ հաճույքով է մասնակիցն ու գործող անձը դառնում նման միջոցառումների: Յուրաքանչյուր մրցույթ յուրատեսակ մասնագիտական, ինֆորմացիոն հաճույք պարունակելուց բացի, իր մեջ կրում է նաեւ ադրենալինի մի չափաբաժին, որ ունկնդրին պահում է հետաքրքրված: Պետք է ասել, որ մրցույթի խանութ մասնակիցների մեջ կային իսկապես տաղանդավոր երիտասարդներ, որոնք ունեին գործիքին տիրապետելու գերազանց վարպետություն եւ հարուստ ներքնաշխարհ: Նրանց գերակշիռ մեծամասնությունը հոկվում են մոլորակի ամենաբարձրակարգ երաժշտական հաստատություններում՝ ամենահայտնի երաժիշտ-մանկավարժների ղեկավարությամբ:

Առաջին փուլի երկօրյա նյարդային իրավիճակը հանգուցալուծվեց մասնակիցների մեկ երկրորդի՝ մրցույթի երկրորդ փուլում ելույթ ունենալու թույլտվությամբ:

Երկրորդ փուլն (ինչպես սովորաբար լինում է) ավելի լարված էր, մրցութային մրցավազքին հարիր: Մրցակիցները՝ ավելի մարտունակ, ունկնդիրն՝ առավել կողմնորոշված իր գերադասությունների մեջ: Դրա ապացույցը մինչեւ կեսգիշեր Ա. Խաչատրյան տուն-թանգարանի լեփլեցուն դահլիճն էր եւ վաղ առավոտից ներկաների հարցառաս դեմքերը: Կեսգիշերին հայտնի դարձան եզրափակիչ փուլ անցած հինգ մասնակիցների անունները: Ցավալիորեն ժյուրին մեր հայրենակիցներից ոչ մեկին հարմար չգտավ երրորդ, վճռորոշ փուլում մրցակիցների ցանկում տեսնել:

Մեկ օր անց մրցութային եզրափակիչ փուլ անցած մասնակիցները Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյան) հետ կատարեցին Արամ Խաչատրյանի գլուգործոցներից մեկը՝ Կոնցերտը ջութակի եւ նվագախմբի համար: Պետք է նշել նաեւ, որ մրցութային այս լարվածությունը տհաճ կերպով անդրադարձավ եզրափակիչ փուլ անցած լեհ մասնակցի՝ Ջոանա Քրեֆթի վրա, որն ունեցավ առողջական խնդիրներ: Ինչեւէ, մրցույթի կուլ-

մինացիան հենց այս փուլն էր, որի արդյունքում որոշվեցին Արամ Խաչատրյան մրցույթի մրցանակակիրները.

Գրան Պրիֆյոդոր Ռուդին (Ֆրանսիա-Ռուսաստան)

1-ին մրցանակ՝ Թանաբե Այակո (Ճապոնիա)

1-ին մրցանակ՝ Պավել Միլյուկով (Ռուսաստան)

2-րդ մրցանակ չի շնորհվել

3-րդ մրցանակ՝ Նակամուրո Դայչի (Ճապոնիա)

Ջոանա Քրեֆթը (Լեհաստան) ստացավ խրախուսական դիպլոմ:

Վերջում՝ մի քանի խոսք մեր ներքին խոհանոցի մասին:

Ցանկալի կլիներ, որ մրցույթի կազմկոմիտեն հետեւողական լիներ եւ հարգեր մրցույթի կայքէջում մրցույթի իր իսկ որոշած պայմանները: Այսպես օրինակ, կայքէջում գրված է՝ «Երկրորդ փուլին կթույլատրվեն ութ մասնակցից ոչ ավելի»: Այդ դեպքում ինչո՞վ բացատրել այդ փուլ անցած միանգամից տասնչորս մասնակցի ներկայությունը: Հավանաբար ժյուրիի անդամների մոտ սովորող մասնակիցների գերակշիռ մեծամասնության համար կանաչ լույս վառելու շատ մեծ անհրաժեշտությո՞ւն կար: Կամ մի ուրիշ օրինակ. «Եզրափակիչ փուլին կթույլատրվեն չորս մասնակցից ոչ ավելի»: Այս անգամ ունեցանք «ընդամենը» հինգը /տես՝ http://www.akhic.am/:

Ասենք նաեւ, որ հազվադեպ մրցույթներ են հոգում «բոլոր մասնակիցների կեցության եւ սննդի ծախսերը»: Սա ի՞նչ է. արեւելյան հյուրասիրության եւս մեկ ցուցադրությո՞ւն, թե՞ «էստի համեցեք»: Կարծում ենք, այդպիսի «բոնուսները» չեն, որ պիտի գրավիչ դարձնեն մեր երկրում կատարողների միակ միջազգային մրցույթը օտարների համար (քանի որ մեր հայրենակիցների գերակշիռ մեծամասնությունը կացարանի կամ սննդի պակաս չի զգում սեփական երկրում): Վճարելով ընդամենը անդամակցության վճար 100 (եվրո) չափով, 16-32 տարեկան որեւէ երաժիշտ կարող է հայտնվել հեռավոր Հայաստան աշխարհում, ունենալ անվճար կացարան, սնունդ, օգտվել տարբեր էքսկուրսիաներից, վայելել մեր արեւի եւ երաժշտասեր հասարակայնության ջերմությունը եւ, որ ամենակարեւորն է, բավական մեծ գումար շահելու ակնկալիքներ ունենալ (1-ին մրցանակ՝ 15000 ԱՄՆ դոլար, 2-րդ մրցանակ՝ 10000 ԱՄՆ դոլար եւ 3-րդ մրցանակ՝ 5000 ԱՄՆ դոլար): Իրավամբ՝ Հայաստան-դրախտավայր:

Այսպիսով, ցավալիորեն ամեն ինչ արված է, որ Ա. Խաչատրյանի անվան մրցույթը վերածվի գերազանցապես դրամ շահելու բավական ցանկալի մի օղակի: Ակնհայտ է, որ այս մրցույթը միջազգային երաժշտական շրջանակներում դեռեւս ձեռք չի բերել այն հեղինակությունը, ինչը կգրավեր օտարազգի երաժիշտներին (ինչը համարում ենք բնական՝ հաշվի առնելով նրա կարճ կենսագրությունը), եւ ոչ էլ համերգային շրջագայությունների պայմանագրեր են այստեղ կնքվում (ինչը միջազգային մրցույթների ամենակարեւոր բաղկացուցիչներից է):

Եթե մրցույթի կազմկոմիտեին հաջողվում է այդման գումար հայթայթել, գուցե ավելի խելամիտ կլիներ այն ծախսել ոչ թե օտարներին շլացնելու, այլ սեփական երկրի երաժշտական/մանկավարժական կյանքը ակտիվացնելու ուղղությամբ: Ասենք օրինակ, ինչո՞ւ չհրավիրել նույն ժյուրիի անդամներին, հանրահայտ երաժիշտ-մանկավարժներին թեկուզ մեկ ամսով աշխատելու Երեւանի պետական կոնսերվատորիայում: Հավատացած եմ, որ կանխավ պայմանավորվելու եւ պատշաճ դրամական փոխհատուցման դեպքում նրանցից յուրաքանչյուրն էլ որեւէ մեկ ազատ ամիս կգտնի նման ձեռնարկի համար: Այսպիսի ձեռնարկը կակտիվացներ կոնսերվատորիայի ուսանողին, նա կսկսեր իրեն զգալ ժամանակակից երաժշտական աշխարհի գործընթացների մի մասնիկ, դուրս կգար գավառական վիճակից եւ ավելի հիշ կնայեր դեպի արեւմուտք՝ երազական հայացքով: Այս վիճակը չէ՞ արդյոք պատճառներից մեկը, որ ոչ մի հայ մասնակից չունեցանք եզրափակիչ փուլում:

Միտքս այն է, որ ցանկալի կլիներ «բոնուսների» վեկտորը փոխեինք դրսից՝ ներս: Վստահ եմ, որ դրանով Արամ Խաչատրյան մրցույթը ժամանակի ընթացքում ավելի մեծ հարգանք եւ հեղինակություն ձեռք կբերեր, քանի որ կունենար է՛լ ավելի կրթված, գրագետ եւ լայնախոհ տեղացի մասնակիցներ:

ՄԱՐԻՆԵ ԿԱՐՈՅԱՆ

Հոգեբանական գիտությունների թեկնածու, ՀՊՄՀ-ի դոցենտ

Էլինա Դանիելյանը միանձնյա առաջատարն է

Կազանում ընթացող շախմատի Գրան Պրիի խաղարկությունում հաջող մրցելույթներն է շարունակում Էլինա Դանիելյանը: Հայ շախմատիստուհին 7 տուրից հետո վաստակած 5 միավորով շարունակում է միանձնյա գլխավորել մրցաշարային աղյուսակը:

Վերջին 2 տուրերում Էլինան 1,5 միավոր վաստակեց: 6-րդ տուրում նա սպիտակներով հաղթեց Նադեժդա Կոսինցեւային, իսկ հաջորդ մրցախաղում հաշտություն կնքեց աշխարհի նախկին չեմպիոնուհի Անտուանետա Ստեֆանովայի հետ:

4,5-ական միավորով Դանիելյանին հետաքնդում են Վիկտորիա Չմիլիտեն, Կատերինա Լահնոն եւ Աննա Մուզիչուկը: Չմիլիտեն նախ ոչ-ոքի խաղաց Համպի Կոներուի հետ, ապա հաղթեց Բեթուլ Յիլդիզին: Լահնոն էլ Ալիսա Գալյամովային պարտության մատնելուց հետո հաշտություն կնքեց աշխարհի չեմպիոնուհի Հոու Յիֆանի հետ: Իսկ Մուզիչուկը կեսական միավորներ վաստակեց Ալեքսանդրա Կոստենյուկի եւ Տատյանա Կոսինցեւայի հետ պարտիաներում:

Առայժմ այնքան էլ հաջող հանդես չի գալիս աշխարհի չեմպիոնուհի Հոու Յիֆանը, որը հաղթող է ճանաչվել Գրան պրիի 2 խաղարկություններում եւ 320 միավորով գլխավորում է ընդհանուր ցուցակը: Հիշեցնենք, որ Էլինա Դանիելյանն առայժմ ընդհանուր աղյուսակում 95 միավոր ունի: Եթե նրան հաջողվի Կազանում 1-ին տեղը զբաղեցնել, ապա կվաստակի 160 միավոր եւ միավորների ընդհանուր քանակը կհասցնի 255-ի: Այնպես որ Կազանում հաջողության հասնելն Էլինայի համար շատ կարեւոր է:

Ֆուտբոլիստներն աչքի ընկան արդյունավետ խաղով

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 13-րդ տուրն աչքի ընկավ բարձր արդյունավետությամբ: 4 խաղում խփվեց 16 գոլ, ինչը ռեկորդային է ընթացիկ առաջնության համար: Բոլորից արդյունավետ գործեցին «Ուլիսի» ֆուտբոլիստները, որոնք 4 անպատասխան գնդակ խփեցին «Իմպուլսի» դարպասը: Աչքի ընկան Շոթա Ջիքիան, Պատոն, Դավիթ Գրիգորյանն ու Արսեն Բալաբեկյանը: «Ուլիսն» ընթացիկ առաջնությունում խոշոր հաշվով առաջին հաղթանակը տոնեց: Իսկ «Իմպուլսը» նման հաշվով առաջին պարտությունը կրեց:

Գոլառատ էր նաեւ «Միկա»-«Փյունիկ» հանդիպումը, որում առաջատարը 3-2 հաշվով կամային հաղթանակ տոնեց: Առաջինը հաջողության հասավ «Փյունիկը», երբ Գեւորգ Կասպարովի կողմից գնդակը հեռացվելուց հետո Դավիթ Մինասյանը հեռվից գրավեց անպատշաճ դարպասը: Դրանից հետո «Միկան» գրավեց մրցակցի դարպասը, սակայն մրցավարը գոլը չհաշվեց: Դա չընկճեց «Միկայի» ֆուտբոլիստներին, որոնք 30-րդ րոպեին Արեգ Ազատյանի հարվածով վերականգնեցին հավասարակշռությունը: Ընդմիջման գնալուց փիչ առաջ անկյունայինի խաղարկումից հետո Ալեքսը գրավեց «Փյունիկի» դարպասը, սակայն մրցավար Տիգրան Հովսեփյանն այս անգամ էլ չարձանագրեց գոլը՝ խախտում գրանցելով «Միկայի» ֆուտբոլիստի կողմից:

Ընդմիջումից հետո իր վճռորոշ խոսքն ասաց «Միկայի» կոտրիվուարցի ֆուտբոլիստ Բոտի Դեմելը: 56-րդ րոպեին խաղադաշտ մտնելով, նա 2 անգամ խոցեց Ալբերտ Օհանյանի պաշտպանած դարպասը: «Փյունիկին» հաջողվեց միայն կրճատել հաշիվը՝ 3-2: Աչքի ընկավ Տարոն Ոսկանյանը:

Գյումրիում «Շիրակը» 2-1 հաշվով հաղթեց «Գանձասարին»: Հետաքրքրական է, որ առաջին շրջանում Կաղանում կայացած խաղում էլ «Շիրակը» հաղթել էր միեւնույն 2-1 հաշվով: Առայժմ «Շիրակը» միակ թիմն է, որին հաջողվել է «Գանձասարին» 2 գոլ խփել: Այդ խաղում 3 գոլերն էլ գրանցվեցին լեգեոնականների օգտին: «Շիրակից» աչքի ընկան Ֆոֆանա Բեկոն ու Լամին Լի Յորոն, «Գանձասարից» միակ գոլը խփեց Յամադոու Կեյտան:

Անհաջողությունները շարունակում են հետապնդել «Արարատին», որը 9-րդ անընդմեջ պարտությունը կրեց: Այս անգամ թիմն Աբովյանում 1-3 հաշվով զիջեց «Բանանցին»: Վերջինիս կազմում գոլերի հեղինակներ դարձան Հովհաննես Համբարձումյանը (11 մ-ից), Վալտեր Պողոսյանն ու Գեւորգ Կարապետյանը: Միայն խաղավարտից 4 րոպե առաջ Վարուժան Մկրտչյանին հաջողվեց կրճատել հաշիվը: Ի դեպ, Վալտեր Պողոսյանը դարձավ ՀՀ առաջնություններում «Բանանցի» խփած հոբելյանական՝ 900-րդ գոլի հեղինակը:

Վաղն առաջնությունում կկայանան 12-րդ տուրից հետաձգված «Փյունիկ»-«Շիրակ» եւ «Բանանց»-«Միկա» հանդիպումները: Ընդ որում «Փյունիկը» «Շիրակին» կհյուրընկալի սեփական մարզաբազայի խաղադաշտում, քանի որ նույն օրը ժամը 17-ին «Հանրապետականում» կայանալու է Էդուարդ Մարգարովի մեծարման արարողությունը՝ նվիրված նրա ծննդյան 70-ամյակին: Այդ օրը «Արարատի» եւ ԽՍՀՄ հավաքականի վետերաններն ընկերական հանդիպում կանցկացնեն:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Միկա	12	9	2	1	25-12	29
2. Շիրակ	12	7	2	3	19-13	23
3. Իմպուլս	13	7	2	4	22-18	23
4. Գանձասար	12	6	2	4	12-7	20
5. Փյունիկ	11	4	3	4	17-16	15
6. Ուլիս	13	3	4	6	15-16	13
7. Բանանց	12	3	3	6	13-17	12
8. Արարատ	13	1	0	12	8-32	3

Ռմբարկուները

Ֆիլիպ Տիմով	«Իմպուլս»	6
Անդրանիկ Բարիկյան	«Շիրակ»	6
Նորայր Գյոզալյան	«Իմպուլս»	6
Սեմյոն Մուրադյան	«Միկա»	5

Քառյակը կշարունակի պայքարը

Ֆուտբոլի Եվրոպայի առաջնությունում հայտնի են քառորդ եզրափակիչի առաջին 2 զույգերը: Հունիսի 21-ին Վարշավայում կմրցեն Չեխիայի եւ Պորտուգալիայի հավաքականները, իսկ հաջորդ օրը Գդանսկում մրցավեճի կբռնվեն Գերմանիայի եւ Հունաստանի ընտրանիները:

Շատերն անակնկալ են համարում հույների հաջող ելույթը, որոնք Կարագունիսի խփած միակ գոլի շնորհիվ պայքարից դուրս թողեցին ռուսներին: Թվում էր, թե ՌԴ հավաքականին կհաջողվի քառորդ եզրափակիչի ուղեգիր նվաճել համեմատաբար հեշտ խմբում: Սակայն ռուսները ձախողվեցին: Պայքարը դադարեցրին նաեւ լեհերը՝ ճանապարհը զիջելով չեխերին 0-1 հաշվով կրած պարտությունից հետո:

Գերմանիան փակեց Դանիայի ճանապարհը՝ հաղթելով 2-1 հաշվով: Պորտուգալացիներն էլ պայքարից դուրս թողեցին հոլանդացիներին Ռոնալդուի խփած 2 գոլերի շնորհիվ:

Եդիգարյանն ու Մանոյանը փորձարկվում են «Մեսալուրգում»

Դոնեցկի «Մեսալուրգում» փորձաշրջան անցնող փյունիկցիներ Արսակ Եդիգարյանն ու Դավիթ Մանոյանը մասնակցում են Ավստրիայում ընթացող ուսումնամարզական հավաքին: Նրանք մասնակցել են «Ուրալի» հետ «Մեսալուրգի» անցկացրած ընկերական հանդիպմանը՝ խաղադաշտ մտնելով 2-րդ խաղակեսին: Խաղն ավարտվել է գոլազուրկ ոչ-ոքի: «Մեսալուրգի» կազմում հանդես է եկել նաեւ Գեւորգ Ղազարյանը, իսկ «Ուրալում»՝ Դենիս Թումասյանը: Հունիսի 20-ին «Մեսալուրգը» ստուգողական խաղ կանցկացնի Սլովենիայի «Ռուդարի» հետ:

Մալաֆյանի նորամուտը հաջող էր

Էդգար Մալաֆյանը նորամուտը նշեց Պլզենի «Վիկտորիայում»՝ մասնակցելով «Իսկրա Դոմժալիցեի» հետ ստուգողական հանդիպմանը: Նա թիմի մեկնարկային կազմում խաղաց 60 րոպե: Ըստ ակումբի պաշտոնական կայքի, թիմի գլխավոր մարզիչ Պավել Վրբան գոհ է մնացել Մալաֆյանի խաղից:

Դավիթ Նալբանդյանը որակազրկվեց

Արգենտինահայ Դավիթ Նալբանդյանի համար տհաճ միջադեպով ավարտվեց թենիսի Լոնդոնի մրցաշարի եզրափակիչ մրցախաղը խորվաթ Մարին Չիլիչի հետ: 2-րդ խաղափուլում չկարողանալով զսպել նյարդային վիճակը, Դավիթը ոտքով հարվածեց գովազդային վահանակին: Այն դիպավ եզրային մրցավարին՝ վնասելով նրա ոտքը: Այդ արարքի համար մրցավարը որոշեց դադարեցնել մրցախաղը եւ որակազրկել Նալբանդյանին՝ հաղթանակը շնորհելով Չիլիչին: Նման վարքագծի համար Նալբանդյանին 10 հազար դոլար տուգանք է սպառնում: Բացի այդ նա զրկվեց մրցաշարում իրեն հասանելիք պարգեւավճարից (56800 դոլար), ինչպես նաեւ մեկ շաբաթում վաստակած վարկանիշային միավորներից:

«Կորտում երբեմն դժվար է լինում վերահսկել զգացմունքներդ, ուստի սխալվում ես: Ափսոսում եմ, որ ամեն ինչ այսպես ավարտվեց: Թենիսիստների վրա ուժեղ ճնշում է գործադրվում պրոֆեսիոնալ թենիսիստների ընկերակցության կողմից: Այդ կազմակերպությունը մեզ ոչնչով չի օգնում: Այսօր ես սխալվեցի, սակայն բոլորն էլ նման սխալներ թույլ են տալիս: Չէի կարող ենթադրել, որ եզրափակիչն այսպիսի ավարտ կունենար», նշել է Դավիթ Նալբանդյանը:

Զերմուկը հյուրընկալել է հուշամրցաշարի մասնակիցներին

Զերմուկում մեկնարկած Կարեն Ասրյանի շախմատի միջազգային 5-րդ մրցաշարի 2 տուրից հետո 2-ական միավորով աղյուսակը գլխավորում են Դավիթ Շահինյանը, Դավիթ Լոմսաձեն, Սուրեն Պողոսյանն ու Դավիթ Պետրոսյանը: Շահինյանը հաղթել է Գոռ Ալեքսանյանին եւ գրոսմայստեր Արթուր Չիբուխչյանին, Լոմսաձեն պարտության է մատնել Մարիամ Մանուկյանին ու միջազգային վարպետ Գրիգորի Օպարինին: Պողոսյանը շահել է Ռազմիկ Ավագյանի եւ գրոսմայստեր Գեւորգ Հարությունյանի հետ մրցավեճերը, իսկ Պետրոսյանն առավելության է հասել Նորայր Թորոսյանի եւ Հասմիկ Շահբազյանի նկատմամբ:

Փորձառու գրոսմայստերներից Լիլիթ Մկրտչյանը վաստակել է 1,5 միավոր, Զավեն Անդրեասյանն ու Արշաքես Մինասյանն ունեն մեկական միավոր: Անհաջող է մեկնարկել գրոսմայստեր Եվգենիա Դոլուխանովան, որը պարտվեց Սամվել Տեր-Սահակյանին եւ հաշտություն կնքեց Վլադիմիր Կանջարյանի հետ: Մրցաշարի ամենաստարեց մասնակից, միջազգային վարպետ Էդուարդ Մնացականյանն էլ մեկնարկում 2 անընդմեջ պարտություն է կրել Դավիթ Մաղալաշվիլուց եւ Գոռ Ալեքսանյանից: Մրցաշարին մասնակցում է 57 շախմատիստ:

Դանիացի պոռնոաստղերը ջախջախեցին գերմանացիներին

Բեռլինում անսովոր ֆուտբոլային հանդիպում կայացավ գերմանացի եւ դանիացի պոռնոաստղերի մասնակցությամբ, որը նվիրված էր Եվրո-2012-ում այդ երկրների ազգային հավաքականների վճռորոշ խաղին: Ի տարբերություն դանիացի ֆուտբոլիստների, պոռնոաստղերը 13-1 հաշվով ջախջախեցին գերմանացիներին:

Ընդհանրապես գերմանացի պոռնոաստղերը մշտապես խոշոր միջազգային մրցաշարերի ժամանակ հանդիպումներ են կազմակերպում մրցակից երկրների համանուն թիմերի հետ: Օրինակ, 2010-ին ՀԱՀ-ում կայացած աշխարհի առաջնության ժամանակ նրանք մրցել էին ավստրալացիների հետ ու պարտվել էին 5-10 հաշվով:

Առնյանը խաղաղասիրաբար էր տրամադրված

Միխայիլ Տալի հուշամրցաշարի 7-րդ եւ 8-րդ տուրերում Լեւոն Առնյանը հաշտություն կնքեց Ալեքսանդր Գրիշչուկի եւ Թեյմուր Ռաջաբովի հետ: 8 տուրից հետո Առնյանը վաստակել է 3,5 միավոր: Առաջատարը 5 միավորով Ֆաբիանո Կարուանան է, որը ոչ-ոքի խաղաց Ռաջաբովի հետ ու հաղթեց Կրամնիկին: 4,5-ական միավոր են վաստակել Կառլսենն ու Ռաջաբովը:

Մխիթարյանը հաջող է մեկնարկել

Բրազիլահայ Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը հաջող է մեկնարկել չեխական Տեպլիցե քաղաքում սկսված շախմատի մրցաշարում: Նա 2 տուրից հետո հարյուր տոկոսանոց արդյունքով 28 շախմատիստների հետ գլխավորում է աղյուսակը: Մխիթարյանը պարտության է մատնել չեխ շախմատիստուհիներ Մարի Բազանտովային եւ Թերեզա Օլսարովային:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հեռքերով

Ավելի շատ ինտերնետ եւ ներքանցային խոսելաժամանակ՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ից

ՎիվաՍել-ՄՏՍ-ն՝ «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ընկերությունը, ներկայացնում է նոր՝ կատարելագործված ինտերնետ-փաթեթներ կանխավճարային բաժանորդների համար: Այժմ բաժանորդներն ունեն փաթեթների ավելի լայն ընտրություն եւ ավելի շատ ինտերնետ եւ անվճար ներքանցային խոսելաժամանակ նախկին գնի դիմաց:

Մասնավորապես, այժմ կարելի է ակտիվացնել նոր՝ «inet 5» փաթեթը: Բացի դրանից՝ 400 դրամի դիմաց տրամադրվող փաթեթը նախկին 20-ի փոխարեն ներառում է 25 ՄԲ, ինչպես նաեւ 25 րոպե անվճար ներքանցային խոսելաժամանակ: «inet 200»-ի փոխարեն 2500 դրամով կարելի է ակտիվացնել «inet 250» փաթեթը, որը ներառում է 150-ի փոխարեն 250 ներքանցային րոպե: Եվ վերջապես «inet 1000» փաթեթի շրջանակում նախկին 500-ի փոխարեն տրամադրվում է 1000 անվճար ներքանցային րոպե:

Փաթեթ	Փաթեթի գին (դրամ)	Ամսական չօգտագործված փաթեթի գումարը	Փաթեթի տրամադրած դրամական
inet 5	5	0	[illegible]
inet [illegible]	25	25	[illegible]
inet 100	[illegible]	[illegible]	[illegible]
inet [illegible]	250	250	[illegible]
inet [illegible]	1000	1000	[illegible]

Բոլոր գները ներառում են ԱԱՀ:

Հիշեցնենք, որ ինտերնետ-փաթեթ կարելի է ակտիվացնել ուղարկելով *477*փաթեթի չափը# հրահանգը: Իսկ չօգտագործած ՄԲ-երն ու խոսելաժամանակը, ինչպես նաեւ փաթեթի վավերականության ժամկետը ճշտելու համար անհրաժեշտ է ուղարկել *477# հրահանգը:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.vivacell.am կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:

Երեւանի «Ադամանդ» ապրանքա-հումքային բորսան իր հաթակում իրականացնում է «Արմենտել» ՓԲԸ-ի կողմից ներկայացված օգտագործված՝ կենտրոնական ՏԿ-ի գծամալուխային կառույցների (ԳՄԿ), ինչպես նաև այլ սարքավորումների, սարքերի, դետալների և բազմաթիվ ապրանքանյութական արժեքների աճուրդային վաճառք:

Գույքի ամբողջական ցանկին ծանոթանալու, ինչպես նաև լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել

(010) 56-52-28 կամ այցելել ք. Երևան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե, կամ բորսայի կայք՝ www.borsa.am:

Կորել է

«ԱՆԴԱԿՈ» ՍՊԸ արտարժույթի առք ու վաճառքի թիվ 668 լիցենզիայի ներդիրը: Համարել անվավեր:



AUDIT & CONSULTING

Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ԱԾ N 081՝ տրված ՀՀ ֆինանսների նախարարության կողմից

«ՊՐՈԳՐԵՍ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ

ՀՀ, ք. Երեւան, Վ. Սարգսյան 26/3

Անկախ Աուդիտորի եզրակացություն

«Գրանդ Տոբակո» ՀՁ ՍՊԸ-ի մասնակիցներին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Գրանդ Տոբակո» ՀՁ ՍՊԸ-ի կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համադարձակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը եւ այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խաբեության կամ սխալի հետեւանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, ղեկավարության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատում:

Մեր համոզմամբ՝ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիքի ձեւափոխման հիմքեր

Ընկերության հիմնական միջոցները (անշարժ գույք) հաշվապահական հաշվեկշռում 01.01.2012 թվականի դրությամբ ներկայացված են սկզբնական արժեքով, որը էականորեն տարբերվում է դրանց իրական արժեքից եւ հանդիսանում է շեղում ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտների պահանջներից: Ընկերության անտոկոս երկարաժամկետ փոխառությունները հաշվապահական հաշվեկշռում ներկայացված են 3,643,822 հազար դրամ գումարով: Ղեկավարությունը փոխառությունները սկզբնական ճանաչումից հետո չի ներկայացրել ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, ինչը հանդիսանում է շեղում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջներից: Ընկերության հաշվապահական տվյալները մատնանշում են, որ եթե ղեկավարությունը փոխառությունները ներկայացներ իրական արժեքով, ապա կպահանջվեր փոխառությունների սկզբնական արժեքը նվազեցնել 738,989 հազար դրամ գումարով:

Հաշվապահական հաշվեկշռում հաշվառվում են անհուսալի դեբիտորական պարտքեր՝ 407,793 հազար դրամի չափով, որոնց համար չի ստեղծվել Հաշվապահական Հաշվառման Միջազգային թիվ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ եւ պայմանական ակտիվներ» ստանդարտի պահանջով անհուսալի դեբիտորական պարտքերի պահուստ:

Ձեւափոխված կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ կարծիքի ձեւափոխման հիմքեր պարագրաֆում նկարագրված հարցի հետեւանքների, կից ֆինանսական հաշվետվությունները ճշմարիտ են ներկայացնում 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Գրանդ Տոբակո» ՀՁ ՍՊԸ-ի ֆինանսական վիճակը եւ նույն ամսաթվին ավարտված տարվա համադարձակ ֆինանսական արդյունքները ու դրամական հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

11 հունիսի, 2012 թ.

Խաչիկ Բեգլարյան — ***Գլխավոր տնօրեն-բաժնետեր***

Արթուր Կիրակոսյան — ***Խմբի ղեկավար-բաժնետեր***

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010	4234660	4658667
Ոչ նյութական ակտիվներ	030	16366	18145
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	040	330	330
Այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	050	8967613	7286266
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	070	30540	55740
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	13249509	12019148
II. Ընթացիկ ակտիվներ			
Նյութեր	090	6476524	13918873
Առագամաբ առարկաներ	110	1172	1071
Արտադրանք	130	8443	50689
Պարտքեր	140	210942	72406
Տրված ընթացիկ կանխավճարներ	150	444492	1535510
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	160	5090208	472297
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի	170	39459	43521
Այլ դեբիտորական պարտքեր	180	19452	18248
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	41159	68325
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	210	3932	2331
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	12335783	16183271
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	25585292	28202419

ՊԱՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու ժամանակաշրջանի վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240	6000000	6000000
Կուտակված շահույթ	270	13787149	13938251
Պահուստային կապիտալ	280	1500000	1500000
Ընդամենը սեփական կապիտալ	300	21287149	21438251
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ	310	2068555	3643822
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	360	2068555	3643822
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390	27590	487034
Ստացված ընթացիկ կանխավճարներ	400	321852	992649
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	1809259	1555949
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության	420	14640	17719
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ	430	53957	64668
Այլ կրեդիտորական պարտքեր	450	2290	2327
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	2229588	3120346
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	25585292	28202419

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ ամփոփված)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ ամփոփված)
1	2	3	4
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	8955101	10623160
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների	020	-7366222	-5534533
Համախառն շահույթ (վնաս)	030	1588879	5088627
Իրացման ծախսեր	040	-373058	-350797
Վարչական ծախսեր	050	-489637	-4980847
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	726184	-243017
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝	070	1403703	1943957
- վարձակալությունից	071	84975	95753
- այլ	072	1318728	1848204
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝	080	-1350843	-1481512
- այլ ակտիվների վաճառքից	081	-948140	-1253606
- այլ	082	-402703	-227906
Գործառնական շահույթ (վնաս)	090	779044	219428
Ֆինանսական ծախսեր	100	-341	
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	130	81033	60290
- ա. թ. ոչ ընթացիկ ակտիվների իրացումից	131	11994	2535
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	859736	279718
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	859736	279718
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	170	-248581	-128616
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	611155	151102

Ղեկավար
Գլխավոր հաշվապահի տեղակալ — ***Գ. Ավալյան***
Ռ. Մախմուդյան

ԳՈՎԱԶԳԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 18.6.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: